

ՄՈՍԿՈՒՄ, 15 (ԱՅՓ).- Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին խոստացաւ վերահաստատել դիւանագիտական սերտ կապերը Մոսկուայի խորհրդային ժամանակաշրջանի դաշնակից Սուրիոյ հետ: Փութին կը խօսէր Սուրիոյ փոխ նախագահ Ապտալ Հալիմ հաստատման հետ ունեցած հանդիպումի մը աւարտին: Փութին եւ հաստատման խոստացան պաշտպանել երկու երկիրներուն շահերը, ինչպէս նաեւ՝ գործակցիլ պաշտպանելու նպատակով երկու երկիրներուն միջև գերուն օժանդակելու համար: Մասնաւորապէս Փութին նշեց, որ սերտ կապերը նախագահ Պաշար Ասատի Մոսկուայի այցելութիւնը, որ տեղի պիտի ունենայ աւելի ուշ: Փութին յոյս յայտնեց նաեւ, որ Ռուսիա-Սուրիա առեւտրի գործակցութիւնը թափ ստանայ:

ՊԵՐՐԻԻ ԱՐԴԻՒՆԱԿԵՏ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ՝ ԶՕՐ. ԼԱՇՈՒՏԻ ԵՒ ՇԱՐԻԻ ՄԻՋԵՒ

Սորիոյ նախագահ Նեպի Պրրի երկ այցելեց Պապատայի նախագահական պալատ եւ Քորայթիմ: Սորիոյ նախագահին այցելութիւնները տուին իրենց արդիւնքը, որովհետեւ որոշուեցաւ այսօր կայացնել կառավարութեան ընթացիկ ժողովը, քննարկելու համար ելեւմուտքի եւ պիտանքի քննարկման երեսփոխանական յանձնախումբին կատարած փոփոխութիւնները՝ 2003ի պետական պիտանքի նախագիծին մէջ:

Պապատայի մէջ նախագահ Կոր. Էմիլ Լահուտ ընդունեց Պրրին, որուն հետ քննարկեց ներքին հարցեր, ինչպէս նաեւ շրջանային պարագայները: Հանդիպումէն ետք Պրրի մերժեց յայտարարութիւններ կատարել եւ բաւարարուեցաւ՝ ըսելով, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է միայն երկրին ընդհանուր կացութիւնը:

Պրրի այցելեց նաեւ Քորայթիմ, ուր վարչապետ Հարիրիի հետ քննարկեց այժմուս իրավիճակը:

Միւս կողմէ, Պրրի երեսփոխաններու հետ շարքապահ իր հանդիպումին ընթացքին հաստատեց շրջանային մարտահրաւիրներուն տարողութիւնը եւ խորքը ըմբռնելու ու անոնց միասնական ու մէկ ձևակառուով դիմադրելու անհր-



Պրրի շեշտեց նաեւ ընկերային մարզին վերաբերող պիտանքի նախագիծի կետերը, որոնք խորհրդարանական յանձնախումբին կողմէ ենթարկուեցան փոփոխութեան: Ան աւելցուց, որ յանձնախումբը, փոխան պեղչուած յօդուածներուն, որոշած է նիւթական այլ ներդրումը Ծար.՝ էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓԻՒՌՔ ԿԱՊԵՐՈՒՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

Կ'ՆՍԵ ՆԱԽԱԳԱՀ ՔՈՉԱՐԵԱՆ

Երէկ շարունակուեցաւ Հայաստանի նախագահ Քոչարեանի Գերմանիա այցելութիւնը: Նախագահին գլխաւորած պատուիրակու թիւնը առաւօտեան մեկնեցաւ Գերմանիոյ հիւսիսային Հոնոլտս - Վեստֆալիա մարզը, ուր տեղւոյն ղեկավարութեան հետ քննարկեց տեղական ինքնակառավարման վերաբերող հարցեր: Քոչարեան քաղաքին մէջ գտնուող Հայ Առաքելական եկեղեցւոյ առաջնորդարանին մէջ Հայաստանի

նախագահը Գերմանիոյ Հայաստանի Հայաստանի Հանրապետութեան նախագահ Կարլ-Լուդվիգ Կրոնշեյնի հետ ունեցաւ թիւնը առաւօտեան մեկնեցաւ Գերմանիոյ հիւսիսային Հոնոլտս - Վեստֆալիա մարզը, ուր տեղւոյն ղեկավարութեան հետ քննարկեց տեղական ինքնակառավարման վերաբերող հարցեր: Քոչարեան քաղաքին մէջ գտնուող Հայ Առաքելական եկեղեցւոյ առաջնորդարանին մէջ Հայաստանի

ԶԷՆՔԻ ԲՆՆԻՉՆԵՐԸ ԲՆՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵՑԻՆ ՍԱՏՏԱՄ ՀԻՒՍԷՅՆԻ ՊԱԼԱՏՆԵՐԸՆ ՍԵԿԸ

Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա զգուշացուցին իրաքի ղեկավար Սատամ Հիւսէյնը դիտել տալով, որ ապագինման համար տրուած ժամանակը պիտի աւարտի: Միացեալ Նահանգներու նախագահ Ջորջ Պուշ յայտարարեց, որ ձանձրացած է իսրայելէն: Պուշ աւելցուց, որ մինչեւ օրս, որքէն փաստ է հաստատած, թէ Սատամ Հիւսէյն իսկապէս սկսած է ապագինման աշխատանքին: Ամերիկացի նախագահը շեշտեց, որ ժամանակը կը սահի, եւ թէ Սատամ շուտով պէտք է ապագինուի:

Պուշ անմիջապէս արձագանգեց Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար Ժէք Սթրո, որ ըսաւ, թէ ամերիկացի նախագահը իրաւունք ունի հարցը այդպէս ներկայացնելու: Սթրո աւելցուց, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի թիւ 1441 բանաձեւը յստակօրէն գծած է ապագինման ուղին, որուն պէտք է հետեւի իրաք՝ ամբողջութեամբ, գործադրելով բոլոր պահանջները:

Եւրոպական Միութեան անդամ մնացեալ երկիրները սակայն Բրիտանիոյ նման չեն պաշտպանեց ամերիկեան տեսակէտը: Ֆրանսայի նախագահ Ժակ Շիրակ, որ կը խօսէր Գերմանիոյ վարչապետ Կեր-հարտ Շրէյտերի հետ ունեցած հանդիպումէ մը ետք, ըսաւ, որ Փարիզ եւ Պերլին համոզուած են, թէ դիւանագիտական եւ ոչ պատերազմի միջոցով պէտք է լուծել իրաքի հարցը: Շրէյտեր իր կարգին ըսաւ, որ Գերմանիա մեծ յոյս ունի, թէ Ապահովութեան Խորհուրդի որոշումը պիտի գործադրուի քաղաքական ճնշումի եւ ոչ թէ զինուորական գործողութեան մը միջոցով: Շրէյտեր վերահաստատեց, թէ Գերմանիա պիտի չմասնակցի զինուորական գործողութեան մը:

Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ռոմանո Փրոտի եւս կոչ ուղղեց Ե-Միութեան կառավարու-

Ծար.՝ էջ 10

ԹՈՒՐՔ ԿԻՊՐԱՅԻՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՈՎ ԹԻՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԳՐԱԻՈՂ ՈՒԺ Է

ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՌԻ ՏԵՆՔԹԱՇ ՎԵՐԱԿԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Յոյն եւ թուրք կիպրացի ղեկավարները երէկ վերսկսան ՄԱԿի հովանաւորութեամբ բանակցութիւնները: Անոնց վրայ մեծ ճնշումներ բանեցուցած են, որպէսզի մինչեւ 28 Փետրուար իրենց կողմին վերամիացման վերաբերեալ համաձայնութիւն մը գոյացընեն, ապահովելու համար, որ վերամիացած կիպրոս մը յառաջիկայ տարի Ե-Միութեան պիտի անդամակցի:

Կիպրոսի նախագահ Կյաֆրոս Քիբրիտէս եւ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ Նոյեմբեր 11էն ի վեր, երբ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան վերամիացման ծրագիրը մերկայացուցած էր, իրարու չեն հանդիպած:

Ժողովին ետք ՄԱԿի մէկ հաղորդագրութիւնը յայտնեց, թէ ղեկավարները վերահաստատած են իրենց յանձնառու-

թիւնը՝ ընդհանուր քարտուղարին վերատեսուելու են ենթարկուած առաջարկին հիման վրայ բանակցելու, մինչեւ Փետրուարի վերջ համաձայնութիւն մը ապահովելու նպատակով: Երկու ղեկավարները դարձեալ ժողով մը պիտի գումարեն Ուրբաթ (վաղը) յետմիջօրէին, աւելցուցած է անիկա:

Երէկուան երեք ժամուան ժողովը տեղի կ'ունենար Հիւսիսային Կիպրոսի մէջ շուրջ 50 հարցով թուրք կիպրացիներու կատարած ցուցնէ օր մը ետք՝ ի նպաստ ՄԱԿի ծրագրին:

ԱՐԻՆՃ ԿՈՉ ԿՈՒՂՎԵ

Մինչ այդ, թուրքիոյ խորհրդարանին նախագահը Պիւլէնթ Արինճ երէկ կոչ ուղղած է թուրք կիպրացիներուն, որ միացեալ մնան յոյն կիպրացիներուն հետ հա-

մաձայնութեան մը յանգելու համար՝ իրենց ռաժոնուած կողմին ապագային շուրջ:

Արինճ կը խօսէր մամոյ ասուխի մը ընթացքին Հիւսիսային Կիպրոս ետօրեայ այցելութեան մը աւարտին:

Դիտել տալով, որ հասկնալի է, թէ «տարբեր կարծիքներ» գոյուլթիւն ունին, ան զգուշացուցած է, որ թուրք կիպրացիներուն ընկերութեան հարցին անուշուլթեամբ «բեւեռացուցու» «միջմիայն յոյններու ի շահ պիտի ըլլայ»:

Ան նաեւ դատապարտած է խումբ մը ցուցարարներ, որոնք Երեքշաբթի օրուան ցոյցին պատահաբար զրահարուցած են թրքական 30 հարգար ուժերը «գրաւող բանակ» նկատելով:

«Չափազանց ցաւալի է, որ հոս կան քանի մը անձեր, որոնք յանդիպումներուն ունին թրքական բանակը գրաւող բանակ նկատելու», ըսած է ան:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ՏԵՆՔԹԱՇԸ ԿԸ ԲՆՆԱԿՏԷ

Միւս կողմէ, Յունաստանի վարչապետ Քոսթաս Սիմիթիս Երեքշաբթի օր յարձակողականի մը ձեռնարկած է Տենքթաշի դէմ, անոր ՄԱԿի ծրագրին դէմ կեցուածքին համար:

Սիմիթիս Եւրոխորհրդարանին ըսած է, որ Անանի ծրագիրը կիպրոսի համար Չուրջբերիոյ ոճով համադաշնակցութեան մը տեղծումին համար, «իսկական առիթ մըն է»:

«Պէտք է ազգայնական զգացումներէ անդին երթալ», յայտարարած է ան՝ ողջունելով կիպրոսի նախագահ Քիբրիտէսը, որ լուծումի մը ի խնդիր հետեւողականօրէն պայքարած անձերէն մէկը եղած է:

(ԱՅՓ)

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ՊԻՏԻ ՏԵՍԱԿՅԻ Վ. ՓՈՒԹԻՆԻ ՅԵՏ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան պաշտօնական ետօրեայ այցելութեամբ մը այսօր պիտի մեկնի Ռուսիա: Ան կը գլխաւորէ նախարարներէ, Ազգային Ժողովի պատգամաւորներէ եւ բարձրաստիճան պաշտօնատարներէ բաղկացած բազմանդամ պատուիրակութիւն մը:

Նախագահ Քոչարեան հանդիպումներ պիտի ունենայ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի, վարչապետ Միխայիլ Բախանովի, Ռուսիոյ դաշնակցային ժողովի դաշնակցային խորհուրդի նախագահ Սերգէյ Միրոնովի եւ այլ պաշտօնատարներու հետ:

Հանդիպումներ նախատեսուած են ակադեմիական, լրատուական շրջանակներու եւ արուեստի գործիչներու հետ: Նախագահ Քոչարեան նաեւ տեսակցութիւն պիտի ունենայ Մոսկուայի մէջ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

Նախագահին գլխաւորած պատուիրակութիւնը պիտի մեկնի Կրասնոտարի մարզ եւ հանդիպում պիտի ունենայ մարզի ղեկավարութեան ու հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ ԶՆՋՈՒԵՑԱԻ

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը երէկ քննարկեց Հայաստանի նախագահական ընտրութիւններուն թեկնածուներուն զբանցման հարցը եւ հաստատեց 11 թեկնածուներու զբանցումը՝ ընտրապայքարէն դուրս ձգելով միայն մէկ թեկնածու՝ նախկին արտաքին գործոց նախարար Րաֆֆի Յովհաննէսեան:

Րաֆֆի Յովհաննէսեան, ինչպէս միւս թեկնածուները, ներկայացուցած էր պահանջուած փաստաթուղթերը եւ անհրաժեշտ ստորագրութիւնները, բացի 10 տարուան քաղաքացիութիւնը հաստատող փաստաթուղթէն: Յովհաննէսեան Հայաստանի քաղաքացիութիւն ստացած էր 2001ին:

Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը մերժելով Ր. Յովհաննէսեանի թեկնածութիւնը, որոշեց վերստին անդրադառնալ անոր պարագային, եթէ դատական ատեաններ որոշեն Րաֆֆի Յովհաննէսեանը Հայաստանի քաղաքացի համարել 1991էն ի վեր, ինչպէս ան կը պահանջէ:

Այսպիսով, Յունուար 21էն սկսեալ քարոզարշաւին պիտի մասնակցին Հայաստանի նախագահական ընտրութիւններու 11 թեկնածուներ՝ Ռոպէրթ Քոչարեան, Ստեփան Դեմիրճեան, Արտաշէս Գեղամեան, Ռուբէն Աւագեան, Արամ Կարապետեան, Արամ Գ. Սարգսեան, Վազգէն Մանուկեան, Վլադիմիր Դարբինեան, Գառնիկ Մարգարեան, Արամ Զ. Սարգսեան եւ Արամ Կարապետեան:

Յանձնաժողովը իր երկուան նիստին նաեւ որոշեց թեկնածուներուն լրատուական միջոցներէն օգտուելու կարգը: Յունուար 21էն Փետրուար 17 երկարող քարոզարշաւի ժամանակամիջոցին իւրաքանչիւր թեկնածու պիտի ստանայ Հայաստանի հանրային պատկերասփիւռէն 60 վայրկեան անվճար եւ 120 վայրկեան վճարովի քարոզութեան առիթ: Իւրաքանչիւր վճարովի վայրկեանը կ'արժէ 120 տոյար:

ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԼՕՍԻ «ԱՐԱՔՍԻ ՊՈՒԼՂՈՒԹԵԱՆ» ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՂՐՈՆ

ԼՕՍԻ «Արաքսի Պուլղորձեան» ընկերաբժշկական կեդրոնին ու անոր մէջ տարուած աշխատանքներուն մասին ծանօթանալու համար, երէկ, 15 Յունուարի առաւօտեան ժամը 11:00ին, Առաքին Տիկին Անտրէ Լահուտ այցելեց կեդրոն, ուր ջերմ ընդունելութեան արժանացաւ:

Նախագահ կեդրոնի մտնելը, տիկինը կտրեց իր կողմէ կեդրոնին նուիրուած հիւանդատար ինքնաշարժին ծափաւէր:

Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէանի, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրեանի, ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան ատենապետ Սեդա Խտրճեանի եւ «Արաքսի Պուլղորձեան» ընկերաբժշկական կեդրոնի տնօրէն Սօսի Սաղրեանի ընկերակցութեամբ, Առաքին Տիկինը շրջեցաւ կեդրոնի բոլոր բաժանումներուն մէջ՝ ծանօթանալով իւրաքանչիւրի աշխատանքին եւ գործելիքներին: Ան ակնատես եղաւ կեդրոնին անօրէնայ եռուն կեանքին, հեւքոտ աշխատանքին եւ հիւանդներուն ցուցաբերուած հոգատարութեան:

Երկրորդ յարկին վրայ Առաքին Տիկինը կատարեց օտիկորամի եւ թիմփանկորամի գործիքներով օժտուած սենեակին բացումը: Այս նոր սարքերը մասնագիտական մանրակրկիտ



Հանդիսութեան ընթացքին

քննութեան կ'ենթարկեն քիթի, կոկորդի եւ ականջի ամէնէն թաքուն եւ ներքին մասերը: Չանոթ կարելի եղած է գնել Պուրճ Համուտի քաղաքապետութեան եւ ԼՕՍԻ կարգ մը մասնաձիւղերու նիւթական ներդրումով:

Ապա «Թանուկեան» արտիկն մէջ տեղի ունեցաւ յատուկ հանդիսութիւն, որուն պաշտօնական հիւրերու կարգին ներկայ էին Քաղաքապետարանի անդամներ, Հ.Յ. Դաշնակցութեան

Ծար.՝ էջ 3

ԽԱՂԱՂ ՅՈՅՑ ՄԸ

Աշխատանքային Ընդհանուր Համադաշնակցության կազմակերպությանը երեկ կատարուեցա իսաղաղ ցույց մը, շուրջ մեկ ժամուսան տևողությամբ:

Յոյցին իրենց մասնակցությունը բերին տարբեր կուսակցություններ և քաղաքական ուժեր, ինչպես Փաղանգաւոր Կուսակցությունը, Ընկերվար Յառաջդիմական Կուսակցությունը, Հրպարակ, Ամալ Ծարժումը, Ղովմի Կուսակցությունը և Հ. Յ. Դ. Կերտնական Կոմիտեի մեկ պատուիրակությունը:

Յոյցը սկսա յետմիջօրեի ժամը 3:00ին Պարպիրի հրապարակէն և աւարտեցա ժամը 4:00ին Ռիտո Սոյի հրապարակին վրայ:

Յոյցին իրենց մասնակցությունը բերին շուրջ 4 հազար քաղաքացիներ:

Յոյցը գլխաւորեցին համադաշնակցության նախագահ Ղասսան Ղոսրն, ինչպես նաև երեսփոխաններ՝ Աբրամ Երհայոյէ, Ապտալա Ֆարաթ, Ալի Խալիլ, Այլուպ Հրմայէտ, Ալի Հասան Խալիլ, Քասմ Հաշէմ, Մարուան Ֆարէս, Մոհամէտ Ռաստ, Ալի Ամմար, Ապտալա Քասիր, Ասէմ Քանսո և կուսակցություններու ղեկավարներ:

Յոյցին ետք Ղոսրն իր կատարած յայտարարություններուն մէջ նշեց, թէ ընդհանուր բաց գործադուլ մը շատ հաւանական է, եթէ կառավարությունը վերջ չտայ տուրքերու քաղաքականություն:

ԶՕՐ. ԼԱՇՈՒՏ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՑ ՏԵՔՈՒԱՆԵԻ ՄԵՋ ՍԱՐԶԱԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՇԱՄԱԼԻՐԻՆ



Նախագահ Կօր. Ըմիլ Լաիուտ երէկ նկատելի տուաւ, որ ներկայ կացութիւնը կը պարտադրէ բոլոր լիբանանցիներուն, անոնք ըլլան պատասխանատու կամ պարզ քաղաքացի, իտացնելու շարքերը և միացնելու ջանքերն ու կեցնածքները՝ դէմ դնելու համար շրջանին մէջ արձանագրուելիք պարզացումներուն:

Նախագահ Լաիուտ շեշտեց, որ Իրաքի հարցին պէտքէ տրուի առաջնահերթութիւն՝ յատկապէս նկատի ունենալով այն իրականութիւնը, որ գրեթէ բոլոր երկիրները համաձայն են քաղաքական բանակցություններու ձևով հարցերը լուծելու ընտրանքին և կը մերժեն պատերազմը:

Նախագահը յիշեց նաև Յովհաննէս Պօղոս Բ. պապին այն յայտարարությունը, թէ՛ Իրաքի դէմ պատերազմը պէտք է ըլլայ ամենէն վերջին քայլը:

Նախագահ Լաիուտ կոչ ուղղեց՝ անսպառնալիք կոչին, յատկապէս Պաղեստինի մէջ օրական դրուած գործադրուող սպանդն ու իսրայէլեան բռնարարները կասեցնելու, ՄԱԿի Ապահովական Խորհուրդի որոշումները գործադրելու, մարդկային իրաւունքները յարգելու, երկիրներու միջեւ երկխօսութեան միջոցով անհրաժեշտութիւններուն իմաստով:

Նախագահ Լաիուտ հաւաստեց, որ Լիբանան կառչած կը մնայ միջապահին օրէնքները յարգելու իր սկզբունքին և աւելցուց, որ Միջին Արեւելքի ներկայ կացութիւնը կը պարտադրէ ՄԱԿի որոշումներուն գործադրութեան անհրաժեշտութիւնը:

Նախագահ Լաիուտ ընդունեց ընդհանուր դատախազ Ատնան Ատուուրի և պետութեան անվտանգութեան ընդհանուր տնօրէն Կօր. Էտուար Մանսուրի:

Միւս կողմէ, նախագահ Լաիուտ երէկ յետմիջօրեին Տեքուանի մէջ բացուած կատարեց իր անունը կրող մարզապահունորական համալիրին:

Բացման արարողութեան ներկայ գտնուեցան խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրի, փոխվարչապետ Իսմաիլ Ֆարէս, բանակի հրամանատար Կօր. Միշէլ Սլէյման, ինչպես նաև պետական, պաշտօնական և զինուորական բազմաթիւ անձնակազմներ:

Նախագահ Լաիուտ շնորհակալական խօսք ուղղեց Արաբական Միացեալ Էմիրություններու նախագահ շէյխ Չայէտ Ալ Սուլթան Ալ Նոհիանի՝ համալիրի կառուցման նպատակով տրամադրած անոնք նիւթական օժանդակութեան համար:

Հանդիսութեան շէյխ Չայէտը ներկայացուց մշակութիւն և կրթութեան նախարար շէյխ Ապտալա Ալ Չայէտը, որ նախագահին ողջունեց իր փոխանցեց նախագահ Լաիուտին:

ՊԸՐՐԻ ԱՐԴԻՆԱԿԵՏ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. Էջէն

պապական պետական գանձարկղին՝ նկատի ունենալով ընդհանուր բացը:

Պրրի ընդունեց երիտասարդութեան և մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէսը, ինչպես նաև շարք մը երեսփոխաններ:

Պրրիի այցելեց նաև երեսփոխանական Խորհրդակցական Հանդիպումին մեկ պատուիրակությունը, որուն մաս կազմեցին երեսփոխաններ՝ Միայել Տահեր, Էլի Աուն, Ղաթթա Սուրի, Ժրպան

Թոք և Աթէֆ Մաժուլանի:

Տահեր յայտնեց, որ ներկայ յարուած մթնոլորտը նկատի ունենալով՝ որոշեցինք այցելել խորհրդարանի նախագահին և ներկայիս իսրայէլի կառավարությունը փրկելու համար:

Տահեր գոհունակութիւն յայտնեց Պրրիի կատարած վոյգ այցելություններուն՝ Պատգամ և Բորայթէմ, և դրուատեց կառավարութեան այսօրուան ժողովը, որ պիտի կայանայ՝

օրակարգ ունենալով պետական պիտանէի նախագիծին բերուած կարգ մը փոփոխություններու քննարկումը:

ՌՈՒՍԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ



Երիտասարդութեան և մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէսը երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթինը, որուն հետ քննարկեց Լիբանանի և Ռուսիոյ երիտասարդութեան և մարմնակրթութեան նախարարություններուն միջեւ յարաբերություններու բարելաման հեռանկարները:

Հանդիպումէն ետք Պոլոթին յայտնեց, որ Յովհաննէսի հետ հանդիպումը առիթ մըն էր քննարկելու երկկողմանի յարաբերությունները և երիտասարդութեան ու մարմնակրթութեան մարզին ներս փոխ գործակցութեան անհրաժեշտութիւնը:

Պոլոթին աւելցուց, որ կը նախատեսուի երկու երկիրներուն միջեւ գործակցութեան համաձայնագրի մը կնքումը:

ԳՐԱՌՈՒՄԸ ՕՐ
ԶԱԼԵԱՅԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՅ
ԲԱՐԵՍԻՍ ՏԻՎԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ՆԱԽԱՃԱՇ
ՀԻՆԳԵԱՐԹԻ, 13 ՄԱՐՏ 2003

ԳՐԱՌՈՒՄԸ ՕՐ
ԼՕՒԻ «ԱՐՑԱՍ» ՄԱՍՆԱՃԻՂ
ՍԱՅՐԵՐՈՒ ՕՐ
8 ՄԱՅԻՍ 2003

ՄԱՀԱՉԴ

Հ. Յ. Դ. «Իշխան» Կոմիտէն կը գումէ իր շրջանի հաւատարմ ընկերներէն՝

ՄԵԼԻԸ ԶԵԶԵՊԱՇԵԱՆԻ

մահը, որ պատահեցա Չորեքշաբթի, 15 Յունուար 2003ին:

ՄԱՀԱՉԴ

Տէր և տիկին Կարապետ և Անայիս Բագլայան
Տէր և տիկին Գրիգոր Բագլայան և զաւակունք
Տէր և տիկին Պարէթ Բագլայան և զաւակունք
Տէր և տիկին Յովհաննէս Հաճինագարեան և զաւակունք

Տէր և տիկին Կարապետ Պատանճեան և զաւակունք
Տէր և տիկին Ժողէֆ Մղտէսեան
Տէր և տիկին Արտակ Մղտէսեան և զաւակունք
Տէր և տիկին Ղազարոս Պատանճեան և զաւակունք
Քէչէպաշեան ընտանիք
Վարդանեան ընտանիք
և Համայն ազգականներ կը գումեն իրենց եղբոր, մօրեղբոր, հօրեղբորորդոյն և հարազատին՝

ՄԵԼԻԸ ԶԵԶԵՊԱՇԵԱՆԻ

մահը, որ պատահեցա Չորեքշաբթի, 15 Յունուար 2003ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 16 Յունուար, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Նոր Միտի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրև մահապը:
● Ցաւակցությունները կ'ընդունուին տէր և տիկին Կարապետ և Անայիս Բագլայաններու բնակարանը, Մար Միայել, Հինգշաբթի 16, Ուրբաթ 17, Շաբաթ 18 և Կիրակի 19 Յունուարին:

Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՌԻՍՈՒՄԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Կը ներկայացնէ՝



«ԿՈՄԻՏԱՍ» ՔԱՆԵԱԿԸ

Շաբաթ, 1 Փեպրուար 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»ին մէջ:
Տոմսերը սրանայ Գրարուն Նարեկացիէն, Համազգայինի գրախանութէն, «Լ. Շանթ» կեդրոնէն և կամ հեռուայնաճէլ 01/258300 թիւին:

ՍԼԱՔ
ԱՒԵԼԻ ԼԱՒ ՌԻՇ, ՔԱՆ՝ ԵՐԲԵԲ
Կիպրոսի գրաւուած բաժինին մէջ Երեքշաբթի օր տեղի ունեցաւ ցույց մը, որուն ընթացքին իւրմը մը թուրք կիպրացի ցուցարարներ 1974էն ի վեր կողմին ներխուժած թրքական բանակը «գրաւող ուժեր» անուանող պատաստներ բարձրացուցին:
Կիպրոսի տագնապին հողովոյթը լեցուն է թրքական վայրագութեամբ՝ ջարդ, տեղահանություն, բռնարարություն, անհետացում, կողոպուտ, գերեզմաններու և սրբավայրերու պղծում, քանդում: Իր վարիչներուն և Անգարայի հրամաններուն անսայով՝ Կիպրոս ներխուժած թրքական բանակը ամբողջ 29 տարի ոյս և քիւնահնդրութիւն սերմանեց կողմին յոյն և թուրք բնակիչներուն միջեւ՝ տագնապը հասցնելով այնպիսի կէտի մը, ուր պահ մը թուեցաւ, թէ սովորական յոյն և թուրք կիպրացիները այլեւս չեն կրնար կողք կողքի ապրիլ ու կողմին բաժնեկցիլ իսաղաղօրէն:
Ու սիւս Երեքշաբթի օրուան բողոքի մեծ ցոյցը:
Խումը մը թուրք կիպրացիներ նոյնիսկ թուրք բանակը համարեցին գրաւող ուժ:
29 տարի սպասելու և դատն փորձառութիւն ապրելու հարկը կա՞ր, որպէսզի Անգարայի բանակը կոչուէր գրաւող ուժ:
Հարց չէ, հայկական առածը կ'ըսէ.
«Աւելի լաւ ուշ, քան՝ երբեք»:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**
Այսօր՝ Հինգշաբթի, 16 Յունուար, կէսօրուան ժամը 12:00ին կ'ընթաց լսել «Հայութեան ներկայութիւնը» խորագրով գիտական համընդհանրութեամբ ՍԵՆ ժողէֆ Համալսարանի կրօնագիտական, պատմագիտական և գրական բաժանումներուն:
Կը ներկայացնէ՝
ՓՐՈՖ. ԸՐԻՍԹԻՆ ՊԱՊԻԿԵԱՆ-ԱՍՍԱՅ:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**
ԱՅՈՍ ԷԿՈՅԵԱՆԻ «ԱՐԱՐԱՏ»
Ֆիլմին ցուցադրութեան առիթով,
Այսօր՝ Հինգշաբթի, 16 Յունուար 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին ունկնդրեցէ մեր հարցազրոյցը՝ «ԱՐԱՐԱՏ» ֆիլմին Լիբանանի մէջ ցրումին պատասխանատու,
"Italia Film" ընկերութեան տնօրէնուհի **ՀԻԱՍ ՄԵՅՏԻ** հետ:

BARON TRAVEL & TOURISM AGENCY
(SALES AGENT FOR ARMENIAN AIRLINES)
ՓԵՏՐՈՒՐ ԱՍՍՈՒԱՆ ՇՐՋԱՊՏՈՅՏԵՐ
● 9-13 Փետրուար SHARM EL SHEIKH 225 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 5 աստղանի պանդոկ)
● 13-17 Փետրուար SHOPPING IN PRAGUE 490 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 4 աստղանի պանդոկ)
● DUBAI (2 գիշեր + 3 ցերեկ) 290 \$ և սկսեալ
ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ
Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ **BARON TRAVEL**, Պուրճ Համուտ, Մարաշ քաղ, հեռ. 01-263624, 01-241344 և 03-275657 թիւերուն:

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՉ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹ
Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին որոշումով՝ Կիրակի, 19 Յունուար 2003, երեկոյեան ժամը 5:00ին, Եկեղեցւոյ Միութեան Շաբթուան առիթով միջեկեղեցական արարողութիւն պիտի կատարուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:
Արարողութեան իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Լիբանանի քրիստոնէայ համայնքներու բոլոր հոգեւոր պետերը և առաջնորդները: Եկեղեցւոյ Միութեան Շաբթուան առիթով Հայրապետական պատգամ պիտի փոխանցէ՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
Եկեղեցական արարողութեան ընթացքին շարականներով ու հոգեւոր երգերով էլոյթ պիտի ունենան Լիբանանի տարբեր համայնքներու երգչախումբերը:
Կոչ կ'ուղղեց մեր բարեպաշտ ժողովուրդին՝ ներկայ գտնուելու հոգեպարտ միջեկեղեցական արարողութեան և աղօթելու Զրիստոսահիմն Եկեղեցւոյ միութեան ու աշխարհի խաղաղութեան համար:
ԴԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՍՓԻՌՈՒՄԱՆ ԿԵԱՆԵ

ԳԵՐՄԱՆ ԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ՝ ԱՅՍՕՐ

Գերմանական գաղութը գլխավորաբար ձեռնարկում է վերջին 10ամեակներում՝ Միլիտ Արեւելքէն հայերու արտագաղթին պատճառով: Մինչև 80ական թուականներ Գերմանիոյ մէջ կար շուրջ 3000 հայ, մինչդեռ ներկայիս գերմանական գաղութին թիւը կը տարրերի 25 - 30 հազարի սահմաններուն մէջ: 1975էն սկսեալ Համալսարանի, Միլիտի, Պերլիտի, Քէօլիտի, Ֆրանքֆորթի, Շիլլերի և այլ քաղաքներու մէջ ստեղծուած են մշակութային կազմակերպութիւններ:

Համաձայն Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդարանի տուեալներուն, Գերմանիոյ մէջ ներկայիս կը գործեն հայկական 11 եկեղեցական եւ 30 հասարակական կազմակերպութիւններ եւ միութիւններ: Գերմանիոյ հայոց թեմը կազմաւորուած է 1991ին, Քէօլիտի մէջ, ուր հաստատուած է նաեւ Գերմանիոյ հայոց թեմի առաջնորդարանը: Գերմանիոյ մէջ կը գործէ նաեւ հայ աւետարանականներու փոքրաթիւ համայնք մը, որ բարեգործական լայն աշխատանք կը ծաւալէ Հայաստանի եւ Արցախի մէջ: Բաւական աշխուժ կերպով կը գործէ Հ. Յ. Դ. տարբեր քաղաքներու մէջ, առաւելաբար ծաւալելով Հայ Դատի առընչուող գործունէութիւն:

Ինչ կը վերաբերի կրթութեան, ապա Գերմանիոյ մէջ հայկական դպրոցներ չկան: Փոխարէն կը կազմակերպուին կիրակնօրեայ դասընթացներ՝ եկեղեցական եւ մշակութային միութիւններուն կողմէ:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԾՆԻՊԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ ՄՈՍԿՈՒՅԷՆ

17 Յունուարին Մոսկուայի Մեծ թատրոնին մէջ պիտի բացուին Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակին նուիրուած յորեքնական տարուան օտնակատարութիւնները՝ Հայաստանի պետական ֆիլիհարմոնիք նուագախումբին ելոյթով: Համերգին ներկայ պիտի գտնուին Ռուսիոյ եւ Հայաստանի նախագահները՝ Վլադիմիր Փուտին եւ Ռոպրթ Քոչարեան: Ելոյթին կազմակերպիչներն են Ռուսիոյ եւ Հայաստանի մշակութի նախարարութիւնները, Ռուսիոյ մէջ Հայաստանի դեսպանատունը եւ միջազգային մշակութային կեդրոնը:

Մոսկուայի ելոյթէն ետք, շարունակելով Ա. Խաչատուրեանի յորեքնական օտնակատարութիւններու շարքը, ֆիլիհարմոնիք նուագախումբը պիտի մեկնի Արարական Միացեալ Էմիրութիւններ, ուր 26 Յունուարին Տուպայի մէջ ելոյթ մը պիտի ունենայ:

ԹԵՍԱԳՈՒՆԻԿԷ

Թեսաղոնիկէի քաղաքացիութեան հրաւերով եւ «Տիմիթրիա» անուանի փառատօնի ծիրէն ներս, Համազգայինի Թեսաղոնիկէի «Ղազարոս Սարեան» մասնաճիւղին կազմակերպութեամբ տեղի ունեցած բացառիկ համերգ քաղաքի համերգասրահին մէջ:

Ներկայ եղան յոյն պաշտօնական անձնակազմութիւններ, յունահայոց թեմի առաջնորդական փոխանորդ Սորէն Մ. վրդ. Տողրամանեան, թեսաղոնիկական հայ դպրութիւնը գրեթէ իր ամբողջութեամբ:

Բացման խօսքը կատարեց Թեսաղոնիկէի փոխ քաղաքացի եւ «Տիմիթրիա» փառատօնի պատասխանատու Անտոնիոս Ենժիմիակոս: Ան իր խօսքին մէջ վեր առաւ հայ երաժշտութիւնը, շնորհակալութիւն յայտնեց քաղաքին մէջ գործող հայկական բոլոր միութիւններուն, որոնց գործակցութեամբ եւ ի մասնաւորի Համազգայինի հետեւողական ջանքերուն շնորհիւ կարելի եղաւ իրականացնել այս որակաւոր երգչախումբին ժամանուր Թեսաղոնիկէ՝ մասնակցելու համար «Տիմիթրիա» փառատօնի գեղարուեստական ելոյթներուն, որ միայն հպարտութիւն կը պատճառէ բոլորին, ըսաւ փոխ քաղաքացի:

Երգչախումբը կը բաղկանար 45 փոքրիկ արուեստագէտներէ, վաստակաշատ խմբավար ու գեղարուեստական ղեկավար Տիգրան Հեքէքեանի առաջնորդութեամբ, հայկական սիրուած երաժշտական ստեղծագործութիւններով, ինչպէս նաեւ՝ օտար երգերով:

ԹՈՐՈՆԹՕ

ԱԹՈՒՄ ԵԿՈՅԵԱՆ ՀՕՄԻ ՎԱՐԺԱՐԱՆ ԿՄՅՅԵԼԷ

Քանադական աշխարհահռչակ բեմադրիչ, «Արարատ» ժապաւէնի հեղինակ եւ բեմադրիչ Աթոմ Էկոյեան այցելեց Թորոնթոյի ՀՕՄԻ երկրորդական վարժարան եւ հանդիպումներ ունեցաւ դպրոցի տնօրէնութեան, ուսուցիչներուն եւ վերի կարգի աշակերտներուն հետ: Երկրորդականի, ինչպէս նաեւ Գոլոյեանի նախակրթարանի Ցրլզ դասարանի աշակերտները «Խուժեցիկ» տնօրէնի գրասենեակը՝ գրուցելու համար Հանրածանօթ բեմադրիչին հետ:

Էկոյեան, պատասխանելով աշակերտներու հարցունքներուն, մանրամասն բացատրութիւններ տուաւ «Արարատ» ժապաւէնի գաղափարի ծնունդին, պատրաստութեան, ցրուումին եւ անոր ստեղծած հետաքրքրութեան մասին: Ան մասնաւորաբար շեշտեց, որ այս ժապաւէնը իր կեանքի ամեն կարեւոր գործերէն մէկն է եւ անհնազանդ ընդմիջում չի ունի իրեն համար, մասնաւոր կը վերաբերի Ցեղասպանութեան, անոր դրսուումին եւ այս հարցի դիմադրամասն հայ նորահաս սերունդին կողմէ: Չրոյցին նաեւ մասնակցեցաւ լուսանկարչական արուեստագէտ Վահէ Պէրպէրեան: Հանդիպումի աւարտին աշակերտները նկարուեցան Էկոյեանի եւ Պէրպէրեանի հետ:

ԻՐԱՆ

«ՊԱՅՄԱՆ» ԵՈՒՄՄԵԱՆ ԳՆԱԿԱՍԱՐՔԻ ԱՐԺԱՆԱՅԱԻ

Տարիներէ ի վեր Հայկական Հարցի ուսումնասիրութեան կեդրոնը կը հրատարակէ մշակութային բովանդակութիւն ունեցող «Պայման» (Փէյման) եռամսեայ պարբերաթիւթը, որուն նպատակն է իրանահայ համայնքը ծանօթացնել իրանցիներուն:


Բովանդակալից այս հանգէսը, թէեւ վերջերս ուշացումով լոյս կը տեսնէ, սակայն արդէն ծանօթ եւ փնտրուած պարբերաթիւթ մըն է իրանի մտաւորական շրջանակներուն մէջ: Պարբերաթիւթին խմբակ գրական կազմը, որ կամաւոր կերպով կ'աշխատի, եռամսեային որակը բարձրակարգով, իր 18 - 19 միացեալ թիւով, արժանացած է մշակութի նախարարութեան գնահատանքին:

ԹՐԲԱԿԱՆ ԱՄԲԱՐՏԱԻՆ ՆՈՐ ՏԻՔԹԱԹԸ

Այն պահուն, երբ հայկութեամբ մերձեցման նոր խարխափումներ հրապարակ կը նետուին նոր գերակատարներով, նոր անուններով, բայց հին յանկերգով, Պաքու այցելող թուրք կուսակցապետը կամ արտաքին գործոց նախարարը, կը կանխեն շփոթները, որպէսզի ոչ ոք ցնորքներ սնուցանէ: Կը յայտարարեն որ Հայաստան Ցեղասպանութեան հարցը սահմանադրութեան պէտք է հանել, հաւանօրէն ըսել կ'ուզեն, որ պէտք է դադարի յայտարարել, թէ այդ հարցը Հայաստանի արտաքին քաղաքականութեան մաս կը կազմէ, եւ մանաւանդ՝ Արեւմտահայաստանի բաւրը գործածելէ: Աշխարհի քարտէսագիրքերը եւ մասնագիտական հրատարակութիւնները հրապարակէն պէտք է քաշել, եւ այդ աշխատանքը չ'աւարտիր այս կամ այն մատենագրան էն անհետացող քանի մը գիրքով: Թրքական քաղաքական յորեքնակները նուրբ տարբերակը կը նուագուի Փարիզի մէջ, ուր ինքնակոչիկները «Հայկութեամբ մեր ձեռք մ'ան յանձնախումբը», իր յայտարարութեան մէջ, թեթեւ հոգիով,



խարար, ժողովուրդ՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի այդ անժամանցելի ոճիրը կոչած են եւ կը կոչեն ցեղասպանութիւն: Ի նչպէս կը նախապէս համաձայնութիւն մը չի դոյնանար՝ ըսելով, որ պատմական ծանրակշիռ իրադարձութեանց բերումով հայ ժողովուրդը ենթարկուած է մեծ վնասներու եւ իրաւազրկուած է, եւ այժմ ժամանակն է, որ նստինք եւ խօսինք տեսնելու համար, թէ ինչպէս պիտի դարձան ենք անցեալին պատահած չարիքը: Ժողովուրդներու միջեւ գոյակցութեան եւ ազնիւ յարաբերութիւններու մշակման այս նախապայմաններէն ետք, երբ կը դադրին տիրապետ, անտառի օրէնքը, կարելի կ'ըլլայ նայիլ ղէպի



պատահի, որ քանի մը հայեր յանկարծ, գարմախի ներշնչումով մը, կը խօսին ողբերգութեան մասին: Յարկող քայլը եղած է պաշտօնապէս, օրէնքով, եւ առնուազան անփափական կատարելու ջանքերով: Երկու ժողովուրդներուն համար, ինչ իմաստ ունի հնչուելու համար, դարձնենք ինչ, ժամանակակից իմաստութեամբ նայինք ղէպի ապագան, եւ այն: Հայկական Ցեղասպանութիւնը, ինչպէս կ'ըսուի այլ պարագաներով, թուրքիոյ պոչէն կախուած թիթեղ կաթսաներու խրճիթի է, որմէ պէտք է ան կարենայ ձերբազատիլ, իր ճիգերով եւ իր բերեկամներուն օժանդակութեամբ: Եւ մեր կեանքին յատուկ երեւելու իրութեան ձգտումն է, որ մեր իրենց մեծ յարգանքները սթապուրուին իրենց թեմերը: Ցեղասպանութիւնը ձգտումն է, որ քանի մը հայեր իրենց թեմերը սթապուրուին պարի մը մէջ, որ իրենց կողմէ չի գլխավորուիր, որուն երաժշտութիւնն ալ իրենք չեն յորինած եւ չեն նուազել:

Հայկութեամբ հաշտեցում կամ մերձեցում դատարկաբանութիւններ են, մինչեւ այն ատեն որ

ապագան: Մեր այնքան տառապած ժողովուրդին մեծ ու պզտիկ ղեկավարները, լիագործածները, օրինակները, ներառեալ ինքնակոչիկները, իրենք իրենց չեն կրնար թոյլատրել նստողութեամբ նաւարկութիւն, փիլիթած ա վիւ:

Գոհունակութեամբ կարելի է արձանագրել այն փաստը, որ սուսկի պէս բուսած այս երկրորդ թրքամէտ եւ տեղատուական խարխափումին ղէմ օրինակելի միասնականութեամբ մը, ծառայեցաւ Ֆրանսահայ համայնքի պատասխանատուները, եւ կ'ենթադրեմ, որ դատապարտութեան նոյն այլքը պիտի տարածուի մինչեւ Հայաստան եւ Սփիւռքի հետու ու մօտ անկիւնները:

Ինչ որ պատահած էր, ողբերգութիւնն չէ, տիկնայք եւ տեարք: Ցեղասպանութիւնն է:

Որքան ալ անհաճոյ թուի ըռնադրաւորին եւ փոխարինողին, Արեւմտահայաստանի Արեւմտահայաստան է, այսինքն՝ Բաղդէ, Մուշ, Սասուն, Կարս, Արտասան, Վան, Հայաստան աշխարհ:

3. ՊԱՆԵԱՆ

ՆԱՍԱԿ ԸԱՅՐԵՆԻԷՆ ՄԵԾ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Չեխ գրող Միլան Բունտերայի վերջին գիրքն է սեղանիս վրայ, Ֆրանսերէնէ անգլերէնի թարգմանուած «Իկնըրմես» («Տգիտութիւն») վէպը, որուն նիւթը կը հետաքրքրէ զիս եւ հաւանաբար այս սիւնակին ընթերցողները:

Վէպի էջերէն կամ իրական կեանքի մէջ քսան տարիէ աւելի իր հայրենիքէն դուրս ապրած հեղինակը կը դիմագրաւէ նոր անկախագած իր երկիրը վերադառնալու խնդիրը: Անկախ է արդէն Չեխիան ու Եւրոպայի գանազան շրջաններ գաղթած չեխերու համար հայրենիք, տուն վերադառնալու հարցը իր գործնական ու հոգեբանական դժուարութիւններով ու հրապոյրներով տագնապեցնող այժմէականութիւն մը կը ստանայ:

Հայրենիքէն այս քսան տարուան բացակայութիւնը հեղինակին կը յուշէ զուգահեռներ փնտրելու նախան առաջադրանքներէն Ողբերգի պատմութեան հետ՝ հիմնականին մէջ կեդրոնանալով Տրոյա-դայի պատերազմէն անոր վերադարձի տարեգրութեան վրայ:

Բունտերա «Ողբերգի» կը նկատէ կարօտափոխի առաջնագոյն զիւցզանով: Ինչն է, որ կը մղէ օտարութեան մէջ, կալիփոս գեղուհիին գիրկը կեանքի առաւել բարեւոյց ու հանելի վիճակ ապահոված Ողբերգի վերադառնալու հայրենի տուն: Ուր է վերադարձի հրապոյրը: Ինչ կը զգայ Ողբերգի այն կախարակական պահուն, երբ տարիներու հեռուարութեան իր հայեացքը առաջին անգամ կ'իջնէ հայրենի եզերքի վրայ: Իսկ հետագային, երբ այլեւս հերոսը առօրեայ կեանքի տաղտուկ կ'ապրի, վերադարձը կը բերէ՝ իրեն հետ գղղում:

Հեղինակը կը տարբարակէ անգլերէն ցոփալեւի բառը, որ հայերէնով կը թարգմանուի կարօտափոխ: Բառը ունի յունական ծագում, կազմուած ըլլալով ցոփոս եւ ալկոս արմատներէն: Կոփոս կը նշանակէ վերադարձ, իսկ ալկոս՝ տառապանք: Վերադարձ՝ ժամանակի մէջ, անցեալին, յիշողութեան, հին մտերմութիւններուն, վերադարձ՝ աշխարհագրականօրէն, տուն, հայրենիք, հարագատ երկնքին, միջավայրին, մանկական քայլերու հետքերուն, պատանեկան շարութիւններուն, այս բոլորին պատճառած անձկութիւնը, անհանգստութիւնը, հակասական զգայնութիւնները, տառապանքն ու երջանկութիւնը, այս բոլորին եւ բազում նմանելի գործօններու դուռնի կարօտափոխը:

Վէպը փորձ մըն է վերանայելու, հասկնալու վերադարձի դրդապատճառը, արդարացնելու անոր անկարելիութիւնը կամ հաշտուելու նոր միջավայրին հետ: Առաջապէս անցնելով իրականութեան՝ վէպի հերոսները իրենց նոր մտերմութիւններով, նոր սէրերով, նոր տունով առաւել ուժեղ ձգողութեան մը ոլորտապտոյտին մէջ կը բռնուին, մինչ հինը, նախկինը գինք անձանաչելի դարձնող փոփոխութիւններով արդէն նպատակայարմարօրէն կը նսեմանայ, կ'աղօտի: Այստեղ չեն ուզեր հայկական ճակատագրորոններու հետ գուգահեռներ մատնանշելու, վէպի հերոսներու փորձառութիւնները սեփական հայելիով դիտելու ամուլ աշխատանքը կատարել:

Ուրեմն ինչ կը փորձեմ ընել: Առաջին հերթին նախանձով կ'արձանագրեմ, որ մենք չունենցանք մեր վերջին շրջանի փոթորկոտ ժամանակներու վիպագիրը, որ կարենար գեղարուեստական ընդհանրացումի ճամբով դիւրացնել մեր փոխարինելի կորուստներուն հետ հաշտուելու ու մեծագոյն ձեռքբերումները գնահատելու անհատական թէ՛ հաւաքական ճիգը:

Յետոյ կրկին ու կրկին կ'ուզեմ զգուշանալ զիւրին երգակցութիւններու յանգրելու, յոգնեցալիս լուծուներու ետին թանցուելու փորձութեան: Հեռանալու կամ վերադառնալու եզրերը իրենց իմաստային ամբողջ խորքով ու ծալքերով հասկնալի կրնան ըլլալ միայն հայրենասէրներու կողմէ, որոնց մէջ ոմանք տարբեր հարկադրանքներու ճնշման տակ իրենց կեանքի ճամբան իրենց կրնարով գծելու հնարաւորութեան գրկուած կամ հոս են, կամ՝ հոս:

Ինծի համար այնքան ըզձախի է մշտական թէ կարճ ժամանակով այցելու վերադարձողներու զգացական աշխարհին ալեկոծումներուն հետ հարկուելու, «Ձուրբերոց» օղակայան էջի պահէն սկսեալ անոնց առաջին յուզումները կիսելու, անոնց ակննդով միջնորոյտին մէջ հին ձայններ որսալը, անոնց աչքով մտերմ տեսարաններ չափելը, մանաւանդ անոնց հայեացքով Արարատի զարթեալ նայիլը: Անկարելի է անշուշտ թափանցել մարդկային հոգիին խորքը, այդ ամէնը անկէ գողնալու, անոր վայելքին բաժնեկից դառնալու անմեղ նպատակի համար իսկ: Քունտեթիւն իր չեխ թէ՛ այլապէս: Նաեւ հայ ընթերցողին կու տայ այդ վայելքը՝ գեղարուեստականօրէն: Գնահատական չի տար, չի դատեր, այլ պարզապէս կը փորձէ թափանցել վերադարձողներու ներաշխարհը ու մեզի համար այլ բանալ անոր դուռը:

Իւրաքանչիւր վերադարձ մեծ է, իւրաքանչիւր վերադարձ ողբերգական մըն է ինքնին:

bezdig_mezdig@hotmail.com

www.hamazkayin.com

«ԱՉՂԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անձեր, որոնք կը փափաքին «Ազգային» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնելու հրատարակման թուականէ առնուած օր մը առաջ, Մինչեւ ԵՊՏԵԿԿՈՅԵԱՆ ԺԱՄԱՐ 5:00: ՄԱՀԱՉՂԱՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի միւսն ուր գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երևույթներ

ԼԵՌՆԵՐՈՒ ՍՊԻՏԱԿ ՍԱԻԱՆԸ ԱՆՀԱՄԲԵՐ ԿԸ ՍՊԱՍԷ ԶԱՅՆ ԱՐԱՏԱԻՈՐՈՂՆԵՐՈՒՆ

Շարժվելով լիբանանեան երկրի վրայ ճառագայթող տաք արեւը եւ շրջանին մէջ տիրող «ամառային ձմեռ»ը, պահ մը մտածել տուին, թէ ձմեռը վերջ գտած է, եւ թէ ամառը կը գտնուի դրան սեմին: Տաք օդը պատճառ դարձաւ, որ քաղաքացիները իրենց տաքուկ բուրդ հագուստներուն փոխարէն կրեն թեթեւ շապիկներ ու գարնանային զգեստներ:

Նոր Տարին իր գանազան նորութիւններով եւ միաժամանակ նոյնութիւններով իրեն հետ բերաւ անսովոր պայծառ երկիրը, բարեխառն եւ երբեմն բաւական տաք օդ մը, որ կարգ մը «խենթ» քաղաքացիներ գիւղի փոխարէն ծով առաջնորդեց:



Սակայն լիբանանեան լեռները ծածկած սպիտակ ձիւները կը յուշէ, թէ ձմեռն մէջ ենք տակաւին եւ ան կը սպասէ իր «սիրահարներուն», որոնց ոտնահետքերը, հակառակ անոր որ կ'աղաւաղեն իր մաքրութիւնը, կը հանդիսանան իր բուն հարստութիւնը ու յաւելեալ արժէք կու տան իրեն:

Բնութեան ծնունդներէն՝ ձիւները, մարդոց առիթ կու տայ իւրաքանչեւ զգացումներ ունենալու եւ ուրախ ու հաճելի ժամեր անցընելու:

Սպիտակ ձիւն, ձիւնեմարդ, իրարու վրայ նետուող ձիւնագնդակներ, դահուկորդ երիտասարդներ եւ փոքրիկներ կենքեր կու տան այս սպիտակ սաւանին եւ իրենց աղմուկով ու խանդավառութեամբ կ'աշխուժացնեն երբեմն անպատի վերածուած շրջանը: Հինէն ի վեր ձիւնը իւրաքանչեւ արժէք ունեցած է մարդուն համար անոր առթիւ ցրտութեան եւ արեւուն տուած ջերմութեան անյարի միութեան մէջ մարդիկ գտած են տարբեր հաճոյք մը, իւրաքանչեւ ուրախութիւն եւ ինքնավստահութիւն մը: Ձիւնը կը պատճառէ սպիտակին եւ կապոյտին միախառնութիւնը հաղապարհը եւ երկիրներն մօտ ըլլալու իւրաքանչեւ զգացում մը, որ հանգստութիւն եւ խաղաղութիւն կը պարգեւէ:

Ընկերութեան եւ յատկապէս երիտասարդութեան նախադիտութիւնը ձմեռն շրջանին կը կեդրոնանան լեռ բարձրանալու եւ դահուկորդ վրայ: Շատեր փոքր տնակներ կամ պարտիզներ մէջ սենեակներ կը վարձեն ամբողջ ձմեռն շրջանին համար: Ուրիշներ կ'իրակնորեայ դրութեամբ եւ արձակուրդներուն կ'երթան դահուկորդ եւ կամ պարզապէս ձիւնով խաղալու: Շատեր մեծ հաճոյքով շաքարալիցիներ հոն կ'անցընեն՝ իրենց ընկերներուն կամ բարեկամներուն հետ ձիւնը դիտելով ու կրակարանին մօտ, կայծերու ճարճատիւնով եւ խորովուող շագանակի բոյրով լեցուն սենեակին մէջ նստած: Այդ գիշերն ու անոր մութը անմահական կը նկատեն երիտասարդները, որոնք տաղտուկով լեցուն իրենց առօրեայէն դուրս գալով քանի մը օր կ'ապրին այդ երջանկութիւնը՝ վերանորոգուած հոգիով եւ աշխուժութեամբ դարձեալ դործի վերադառնալու: Ըստ անոնց, երկայնի երջանկութեան զգացում կ'ունենան, երբ կը տեսնեն երկիրէն «թափող» սպիտակ փաթիլները, որոնք բացարձակ մթութեան մէջ կը նմանին լոյսի շիթերու: Քաղաքէն հեռու ըլլալու իրողութիւնը ինքնաբերաբար մարդոց կ'ընծայէ խաղաղութիւն, հանդարտութիւն եւ մաքուր օդ: Մեծ է թիւը այն երիտասարդներուն եւ ընտանիքներուն, որոնք առիթը չեն փախցնելու ձմեռն շրջանին այդ հաճոյքը ապրելու:

Գիւղացիներուն վկայութեամբ, այս տարուան ընթացքին կացութիւնը որոշ փոփոխութեան ենթարկուած է: Նուազած է գիւղացիներուն թիւը՝ համեմատաբար նախորդ տարիներուն: Հակառակ անոր որ օդը բաւական պայծառ է եւ մեծ թիւով գիւղ բարձրացողներ կ'ենթադրէ, քաղաքացիները զանազան պատճառներով, որոնց զլխաւորը կրնայ նիւթականը ըլլալ, այս տարի դադարած են այդ «սովորութենէն»: Անոնք կը նախընտան իրենց տունները մնալ եւ կամ պտտիլ քաղաքին մէջ: Անոնց վկայութեամբ, մեծ հաճոյք պատճառող ձիւնագնդակներ սկսած է հարցի վերածուելի վերջին շրջանին, որովհետեւ անկա կ'ենթադրէ նիւթական որոշ «մսխուծ»՝ հաճոյքի եւ պտոյտի համար: Այս իրողութիւնը տխուր այլ պարագայ մը կը պարզէ նաեւ գիւղերուն մէջ:

Վերջին շրջանին տիրող պայծառ օդը յամենալու պարագային կրնայ որոշ չափով վտանգել կացութիւնը, որովհետեւ ձիւնը արդէն սկսած է հալիլ: Շրջանին մէջ խանութի եւ պանդուխտ ունեցողները իրենց ձեռքերը երկիրը բարձրացուցած կ'աղօթեն, որ դարձեալ ձիւնէ, որովհետեւ իրենց տարեկան ապրուստը ապահովելու շրջանը կը հանդիսանայ ձմեռը, եւ թէ չօգտուելի այդ ժամանակաշրջանէն, կրնան ամբողջ տարին նեղ կացութեան մատնուիլ: Բնութեան իշխանութեան տակ ապրող եւ անկէ կախեալ եղող այս մարդիկը կ'ըսեն, թէ անցեալ տարուան

համեմատ, այս տարի գիւղերը զգալիորէն նուազած են եւ աւելի յարմար ու ձեռնտու պայմաններ ստեղծուած են: Անոնք կը հաստատեն, թէ իրենք պատրաստած են դահուկներն ու սահնակները եւ կը սպասեն մեծ թիւով այցելուներու: Ըստ անոնց, Դեկտեմբեր ամսուան ընթացքին լեռնային շրջանները բաւական խնորհուած էին, սակայն Նոր Տարուան սկիզբէն մինչեւ օրս անոնց թիւը նուազած է եւ զգալի ամառութիւն մը ստեղծուած է շրջանին մէջ: Սակայն անոնք կը հաստատեն, որ տակաւին չեն դադարած յուսալէ եւ ծանուցումներու ճամբով կը յայտարարեն, թէ գիւղերը բաւական նուազած են եւ ձիւնի սիրահարները կը բաւերին շրջան: Իրզի շրջանին մէջ դահուկներու տարեկան բաժանորդագրութիւնը նուազած է եւ անցեալ տարուան 400 տոյրին փոխարէն եղած է 300, իսկ օրական դրութեամբ վարձուած դահուկներուն գինը 35էն 25 հազարի նուազած է, շաբթուան բոլոր օրերուն՝ համար: Դահուկներու արտօնեալ ժամերը կը նկատուին առաւօտեան ժամը 8էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00: Ըստ կազմակերպիչներուն, մեծաթիւ խումբերու կամ դպրոցներու պարագային այս գիւղերը կրնան որոշ փոփոխութիւններ կրել եւ նուազիլ:

Այլ շրջաններու մէջ գիւղերը որոշ չափով կը տարբերին: Զաարուրի մէջ շաքարալիցիներ ամբողջ օրուան համար վարձուող դահուկին գինը 40 հազար լ. ոսկի է, իսկ կէս օրուան համար՝ 24 հազար: Շաբթուան ընթացքին ամբողջ օրուան համար կը գանձուի 24 հազար լ. ոսկի, իսկ կէս օրուան համար՝ 18 հազար: Սակայն կայ նաեւ հակառակը: Փարայայի շրջանին մէջ գիւղերը փոխանակ նուազելու՝ բարձրացած են գրեթէ կրկնապատիկ անգամ, զարմանք ու միաժամանակ զգոհութիւն յառաջանցելով քաղաքացիներուն մօտ:


Այս ծիրին մէջ աշխատանք տանող պետական յանձնախումբի անդամներուն հաստատումով, ձիւնագնդակներն ու դահուկարշաւը աւելի եւս զարգացնելու նպատակով 21էն 25 ֆետրուարին պիտի կազմակերպուին տղոց եւ աղջիկներու միջազգային դահուկի շաքար, որուն ընթացքին մրցումներ տեղի պիտի ունենան Լիբանանի դահուկի ֆետերասիոնին հետ գործակալաբար:

Այս մարզը աւելի եւս աշխուժացնելու եւ քաղաքացիները քաջալերելու նպատակով, Լիբանանի ֆետերասիոնը ձեռնարկած է յատուկ թղթիկներու հրատարակութեան: Անոնց մէջ կը յիշուի, թէ ինչ են այն անուրիները, զորս դահուկորդը կամ ձիւնագնդակը պէտք է ունենայ իրեն հետ եւ կամ ինքնաշարժին մէջ: Նշուած է, թէ պէտք է ապահով հագնիլ, պաշտպանուիլ արեւու զօրաւոր ճառագայթներէն, սահմանազօնուած շրջանէն դուրս չելլել եւ ճշգրտուած ժամերին աւելի ուշ չմնալ հետոյ շրջաններուն մէջ, զգուշանալ արգիլեալ շրջաններուն մօտենալու եւ այլն: Այս թղթիկներուն նպատակն է անխորժ կացութիւններու եւ վտանգներու առաջը առնել, հսկել քաղաքացիներու ապահովութեան: Ասոր կողքին, պետութիւնը այս ծիրին մէջ աշխուժ աշխատանք կը տանի ձիւնածածկ ճամբաները ճիշդ ժամանակին մաքրելու առնչութեամբ:

Փաստօրէն բնութեան գեղեցիկութիւնն ու զանազան կողմերու եւ կազմակերպութիւններու գործունէութիւնը կը միանան ձիւնագնդակներուն եւ դահուկորդներուն հաճոյքը զգալիութեան հետ հասցնելու համար, սակայն տակաւին այս մարզը, որ մեծ հաճոյք կը պատճառէ շատերուն, կը շարունակէ հարցականներ ստեղծել, որովհետեւ նիւթական ներկայ պայմանները որոշ դժուարութիւններու առջեւ կը դնեն ընտանիքներն ու անհատները:

Բնութիւնը հիանալի է, ձիւնը սպիտակ է եւ արեւը կը ժպտի երկնակամարին վրայ, սակայն արդեօք քաղաքացիները առիթ պիտի ունենան այս բոլորէն սպտուելու եւ իրենց ոտնահետքերով արատաւորելու սպիտակ սաւանը եւ ըմբոշնելու այդ իւրաքանչեւ հաճոյքը...

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ



ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները

ՈՒՐԱԽ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ՝ ՏՈՒՐՄԸ Բ.

Տուրմի տեսակները աշխարհի տարածքին Իւրաքանչիւր երկիր իրեն յատուկ չափանիշներու վրայ հիմնուելով կը պատրաստէ տուրմը: Կը ներկայացնենք կարգ մը երկիրներ՝ զիրենք յատկանշող տուրմերու տեսակներով:

1.- ՊԵՆՆԻՆԻԱ

Պելճիքա հարուստ է մուժ գոյն ունեցող տուրմով: Պելճիքական տուրմը հաստ հիւսածք ունի եւ հարուստ է «արմա»ով: Յատկանշականն է՝ «Կոտիվա»ն եւ «Քոթ տ'օրը»:

2.- ՖՐԱՆՍԱ

Ֆրանսա հարուստ է մուժ գոյնի, «արմա»ով հարուստ տուրմերով, որոնք նախընտրաբար կը ճաշակուին դաւած մը սուրճով կամ ռոմով: Յատկանշականն է՝ «Փուլեմ»ը եւ «Պեոնցա»-ը:

3.- ԳԵՐՄԱՆԻԱ

Խիտ, հարուստ եւ քաղցր՝ գերմանական տուրմը ընդհանրապէս նուշով պատրաստուած կ'ըլլայ: Յատկանշականն է «Մոնցա»-ը եւ «Ռեպպել»-ը:

4.- ԲՐԻՏԱՆԻԱ

Բրիտանիա հռչակաւոր է մուժ գոյնի, քաղցր եւ կաթով հարուստ տուրմերու տեսակներով: Բրիտանացի մասնագէտներուն կը վերագրուի նաեւ անանուխով պատրաստուած տուրմը, որ ընդհանրապէս սուրճին հետ կը ճաշակեն: Յատկանշականն է՝ «Քոտպլի»-ն, «Ճոգրֆ Թեթի»-ն, «Շարպոն-Գեյ»-ը եւ «Ուոքըր»-ը:

5.- ՀՈՒՆԴԱ

Հունացի կը յատկանշուի քաղցր փոշիի պատրաստութեամբ, հետեւաբար անոր արտադրած տուրմը իւրաքանչեւ համ ունի: Յատկանշականն է՝ «Վաճ Հուրթ»-ը եւ «Տրոսք»-ը:

6.- ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ հիւսիսային մասին մէջ կ'արտադրուի սերով հարուստ, կաղի սերով պատրաստուած տուրմը: Յատկանշականն է՝ «Փերուցիան», «Մոթա»-ն եւ «Ռոնցո»-ն:

7.- ՉՈՒԻՅԵՐԻԱ

Չուիցերիա հարուստ է փափուկ, սերով հարուստ, թէ՛ քաղցր եւ թէ՛ լիցի տուրմի տեսակներով: Չուիցերիական տուրմի հարուստ տեսակները գնահատուած են մասնագէտներու կողմէ: Յատկանշականն է՝ «Նեսլե»-ն, «Թոպլե-րոն»-ը, «Սուշար»-ը, «Լիմտը»-ը:

8.- ՄԻԱՅԵԱԿ ԵՎ ԼԱՎՆՊԵՐ

Ամերիկացիները կը



նախընտրեն բերին մէջ կարծր մնացող տուրմերու տեսակները: Տասնիներորդ դարէն սկսեալ Միացեալ Նահանգներու շուկաներուն մէջ տարածուած է «Հըր-շի» ընկերութիւնը, որ իր կարգին կ'արտադրէ տարբեր անուններով տուրմի տեսակներ:

ՏՈՒՐՄԻՆ ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

Հակառակ անոր որ տուրմը «կը մեղադրուի իբրեւ զիջող եւ բշտիկներ յառաջացնող ուտելիք մը, սակայն փաստուած է, որ ան սննդագիտական մեծ առաւելութիւններ ունի: Տուրմը բաղկացնող կարգ մը քիմիական տարրեր, ինչպէս քաֆեինը, քիտոպրոմիճը եւ ֆեցիլէրիլամիճը ազդեցութիւն ունին ֆիզիքական եւ մտային դերակատարութիւններու վրայ: Տուրմին մէջ գտնուող քաֆեինի քանակը շատ աւելի նուազ է, քան՝ սուրճին կամ թէյին մէջ գտնուողը: պատրաստութեամբ, հետեւաբար անոր արտադրած տուրմը իւրաքանչեւ համ ունի: Յատկանշականն է՝ «Վաճ Հուրթ»-ը եւ «Տրոսք»-ը:

Անոնք, որոնք իրենց ծանրութեան ուշադրութիւն կ'ընեն, յանձնարարելի է, որ շատ տուրմ ուտեն, որովհետեւ կաթով պատրաստուած 100 կրամ տուրմը 530 քաղցրի պակաս է: Բաղդատելով տուրմերուն տեսակները՝ ըսենք որ մուժ գոյնի տուրմերը աւելի քիչ քաղցր կը պատրաստուեն: Մնացորդները կը մնայ ուրախ առիթներու լաւագոյն նուազելու համար:

ՔԱՐԱՆ ԵՄՐԱՍԵԱՆ
«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի ձեռնարկով համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. 258526, 260115 եւ 241274:



Կնոջական

ՍՎԵԹԱ ՔՈՐՈՂՈՎԱ

19ամեայ ուսուցիչ Սվեթա Քորոլովա վերջերս Պէյրոսի «Մոփի» պանդոկին մէջ ընտրուեց 2002ի Եւրոպայի գեղեցկուհին:

Սվեթա դրական կարծիք կազմած է Լիբանանի եւ իրանականներուն մասին եւ խոստովանած է, որ շատ պիտի փափաքէր Լիբանան ապրել: Անոր կարծիքով, 2003ը իր տարին պիտի չըլլայ, քանի որ իր ամբողջ ժամանակը պիտի տրամադրէ ուրիշներուն եւ կարելի պիտի ընէ, որ աշխարհի չորս կողմը մեծ թիւով մարդիկ վերագտնեն իրենց ժպիտը:

Եւրոպայի գեղեցկուհին ցարդ ո՛չ նշանուած է, ո՛չ ալ ընկեր ունի. ան այս տարուան ընթացքին շատ բազմազարդ պիտի ըլլայ, քանի որ, ինչպէս ըսաւ, 2003ը իրեն չի պատկանիր, այլ՝ ուրիշներուն:

Երբ հարց կը տրուի ֆեմինիսթ շարժումին մասին, Սվեթա կ'ըսէ, թէ ինք աւանդապահ կին է եւ կը նախընտրէ ընտանիք մը կազմել եւ հոն յաջողի, քան՝ ասպարէզի մը մէջ: Անոր կարծիքով, կին մը նախապատուութիւնը պէտք է տայ իր ընտանիքին:

Դպրոցական տարիներուն Սվեթա ուսումնասիրութիւն մը պատրաստած է Բ. Աշխարհամարտին մասին եւ ընդգծած է պատերազմին վատ անդրադարձը երեխաներուն վրայ: Տակաւին մինչեւ այսօր ան տպաւորուած է այդ ուսումնասիրութեամբ եւ՝ համոզուած, թէ երեխաները ամէնէն աւելի տառապողներն են:

Երբ հարց տրուած է, թէ արդեօք կը ծրագրէ՞ աշխարհի գեղեցկուհիի՝ «Միս Ուրլտ» ընտրութեան մասնակցիլ, Սվեթա հաստատ «ոչ»ով կը պատասխանէ՝ աւելցնելով. «Կը կարծեմ, որ հասած եմ գագաթին եւ աւելին չեմ ձգտիր»:

Վերջապէս նշենք, որ Սվեթա Քորոլովա ունի երկու որդեակ քոյր մը, որ իր կարծիքով իրմէ աւելի գեղեցիկ է:

ՓՈՐՁ - ԸՆԹԱՐԱՆ

ՄԱՅՐ ԵՒ ԿԻՆ ԿԸ ՅԱԶՈՂԻՔ ՀԱՇՏԵՑՆԵԼ ԱՅՍ ԵՐԿՈՒ ԴԵՐԵՐԸ

Դիւրին չէ մայր ըլլալը...

Տակաւին աւելի դժուար երեխաներուն նուիրուիլ եւ միաժամանակ ցանկալի կին մնալը:

Արդեօք ո՞ր էք այս երկու դերերուն միջեւ, յաջողած էք հաշտեցնել զանոնք եւ միջին եզր մը գտնել...

Պատասխանեցէ՛ք վարի 10 հարցումներուն՝ ընտրելով հաւանական 3 պատասխաններէն յարմարագոյնը, ապա կարդացէ՛ք վերջնական պատասխանը:

1

Նախքան առաջին գաւակ մը ունենալը կը մտածէք, թէ՛

ա.- «Երբ ժամանակը գայ, կը մտածեմ, անիմաստ է ծրագրիներ մշակելը»:

բ.- «Շուտ գաւակ մը պէտք է ծնիմ, արդէն 25 տարեկան եմ»:

գ.- «Տակաւին ժամանակ ունիմ, 32 տարեկանիս կը մտածեմ այդ մասին...»:

2

Յղութեան ճրգ մասը հայելիին առջեւ դուրս ձգել կը մտածէք

ա.- «Անգամ մը որ երեխա ծնի, ինքզինքս վերագտնելու մեծ գործ մը կը սպասէ ինձի»:

բ.- «Շուտով յղութիւնս վերջ կը գտնէ, երանի՛ք ինչ մըն ալ երկար էր...»:

գ.- «Ինչ ահաւոր վիճակ, բարեբախտաբար ամէն բան շուտով վերջ կը գտնէ»:

3

Ծննդաբերութենէն ետք ծայր կ'առնեն անվերջանալի այցելութիւններ:

ա.- Հազուադէպ, մազերը յարգարուած՝ ձեր կարելի կ'ընէք «ներկայանալի» երեւելու համար:

բ.- Ձեր արտաքինին կարեւորութիւնն չէք տար, ձեր վերջին մտահոգութիւնն է:

գ.- Վերջին ծայր հազուադէպ, յարգարուած՝ արդէն իսկ գտած էք ձեր վայելչութիւնը:

4

Ծննդաբերութենէն ետք ձեր ամուսինին կը տրամադրէք ձեր ժամանակին

ա.- 50 առ հարիւրը
բ.- 40 առ հարիւրը
գ.- 60 առ հարիւրը

5

Ձեր ամուսինը կը կանչէք

ա.- Իր անունով
բ.- «Պապա»ով
գ.- Փաղաքական ծածկանունով մը

6

Եթէ հաւաքոյթի մը հրաւիրուիք

ա.- Նորածինը կը վստահիք հարազատի մը եւ ձեր ամուսինին կ'ընկերակցիք:
բ.- Կը մերժէք երեխան ուրիշին վստահիլ եւ կը մերժէք հրաւիրը:



գ.- Պէյպի սիթըրի մը կը վստահիք երեխան եւ հաճոյքով կ'ընդառաջէք հրաւիրին:

7 Առաջին անգամ, որ ձեր գաւակն քանի մը օրով հեռացաւ

ա.- Ան մտաւորապէս 1 տարեկան էր:
բ.- Ան մտաւորապէս 3 տարեկան էր:
գ.- Ան ոչ իսկ 6 ամսու էր:

8 Առաջին անգամ ըլլալով ձեր երեխային հետ դուրս կ'ելլէք, զինք կը տանիք

ա.- Բարեկամուհիի մը տունը:
բ.- Մօտակայ հանրային պարտէզը:
գ.- Մեծ հանրախանութի մը՝ գնումի:

9 Եթէ դուրս ձեր 10ի վրայ նիշ պիտի տաք իրեն մայր,

ա.- 7
բ.- 9
գ.- 6

10 Եթէ դուրս ձեր 10ի վրայ նիշ պիտի տաք իրեն կին,

ա.- 7
բ.- 6
գ.- 9

ՊԱՏԱՍԽԱՆ

• Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը «ա» է, առաջին հերթին ուրախ կուրջակից մը եւ կին մըն էք: Ձեր ծննդաբերութենէն ետք յաջողած էք վերագտնել ձեր բարեմտութիւնը, ձեր բարեկամութիւնը, ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը «բ» է, առաջին հերթին անհոգի եւ անպատասխան մըն էք: Ձեր ծննդաբերութենէն ետք ձեր ամուսինը կը կանչէք ձեր անունով: Ձեր ամուսինը կը մերժէ ձեր հրաւիրը: Ձեր ամուսինը կը մերժէ ձեր հրաւիրը: Ձեր ամուսինը կը մերժէ ձեր հրաւիրը: Ձեր ամուսինը կը մերժէ ձեր հրաւիրը:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ անտարակաճ ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:

ԲՈՅՍԵՐՈՒ ԽՆԱՍԷ

ՍԱՆՍԵԼԻԵՐԱ (ԿԵՍՐՈՋ ԼԵԶՈՒ)

Սանսելիերան սրածայր, բաւական կարծր տերեւներով բոյս մըն է, այս պատճառով ալ զայն կը կոչենք նաեւ կես-բոյս լեզու: Բոյսին հասակը կրնայ մինչեւ մէկ մետրի հասնիլ, իսկ գոյնը կանաչով դեղին է, երբեմն ճերմակ հոտաւէտ ծաղիկներ կը յայտնուին գարնանամուտին, հասուն բոյսերու պարագային:



• Սանսելիերան զօրաւոր լոյս կ'ուզէ, բայց ոչ՝ արեւի ճառագայթներ: Անիկ բաւական տոկոսն է քիչ խնամքի կարօտող բոյս մըն է եւ «ներողամիտ» է ձեր անհոգութիւններուն հանդէպ:
• Սանսելիերան կ'ախորժի 15 ջերմաստիճանէն. գայն ամէն տարի գարնան փոխադրեցէք քիչ մը աւելի մեծ թաղարի մը մէջ, անուշտ անոր հողը «ներողութեամբ»:
• Ինչ կը վերաբերի տարրական խնամքին, այս բոյսը մեծ պահանջներ չունի, պէտք է ջրել 15 օրը անգամ մը՝ Մարտէն Հոկտեմբերի միջեւ, իսկ ձմեռան՝ ամիսը անգամ մը:
Մարտէն Հոկտեմբերի ընթացքին հեղուկ պարարտացուցիչ մը տուէք 15 օրը անգամ մը:

ԽՈՐԱԳԻՐ

ՔԸԶՊԱՐԱՅՈՎ ԵՒ ՀԱՄԵՄՆԵՐՈՎ ԳԵՏՆԱԽՆՁՈՐ (Մարտեան մասնագիտութիւն)



- Բաղադրութիւն՝ 5 անձի համար
1 քիլո գետնախնձոր
2 լոլիկ
3 սոխ
2 պեղ սխտոր
3 ցողուն ազատքեղ
3 ցողուն թարմ պարսկական
Ապուրի երեք դգալ ձիթաւիղ
Դափնի տերեւ մը
Պտղունց մը կոնսպրպեղ (ժեմժամպր)
Պտղունց մը քիմիոն
Պտղունց մը կարմիր փոշի պղպեղ
Աղ եւ սեւ համեմ

Պատրաստութիւն
Գետնախնձորները կեղուել եւ կտր շերտեր: Լոլիկները կեղուել եւ մանր կտրտել: Սոխերը կեղուել եւ օղակաձեւ կտրտել: Սխտորը կեղուել եւ ճգմել: Ազատքեղն ու թարմ պարսկականը լուալ, ցամքեցնել եւ մանրել:
Ձէթը տաքցնել եւ սոխը մէջը 5 վայրկեան «դարձընել», աւելցնել գետնախնձորը, լոլիկը, սխտորը, դափնի տերեւը, մանրուած ազատքեղն ու թարմ պարսկականը, կոնսպրպեղը, քիմիոնը, փոշի կարմիր պղպեղը, աղն ու սեւ պղպեղը:
Բաղադրութեան վրայ աւելցնել 50 սանթիլիթր ջուր, կափարիչը գոցել եւ 45 վայրկեան եփել՝ մեղմ կրակի վրայ:
Հրամցնել տաք կամ զառիճ մսեղանի մը կողքին:
Նշենք, որ մարտեցիները ճաշերու եւ քաղցրեղէններու շատ ճոխ եւ նրբաճաշակ ճաշացուցակ մը ունին, որ կը յատկանշուի բուրբուրանաւէտ խոտերու գործածութեամբ:
Այսօրուան խոհագիրը Մարտի մէջ հրամցուող շատ ընթացիկ անթրէ մըն է, գոր կրնանք հրամցնել մսեղանի մը կողքին:

Պատրաստե՛ք շՈՒՅԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ

www.homenetmentcentral.com

www.aztagdaily.com

VISION CARE CENTER

Knajian Opticals

Our answers to your questions on customised progressive lenses.



- Comprehensive eye care
Specialized progressive lens services
Doctor supervised contact lens fitting

Address: Autorialite Jdeideh, behind Almaza Beer factory facing McDonald's Restaurant, Yara Center, First Floor.

VICTORINOX Equipping People for Life's Adventures. Includes images of various tools like pliers, screwdrivers, and a multi-tool.

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5345 Պատրաստեց՝ S.U. ԱՂԱԶԱՐԵԱՆ

11x11 grid for a crossword puzzle.

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՈՒՂԱԿԱՆՅԱՆՑ

- 1. Աչքը փոս ինկած - Ախտածէս:
2. Ոսկորի խախտում - Հայ դիտուհի:
3. Այրուբենէն - Կիսեփ - Ափրիկեան երկիր:
4. Քաջատոճմիկ:
5. Շարժիլ - Տառի մը անունը:
6. Մեղքերու թողութեան վայր - Տանիքի կարկառուն եզերք:
7. Հաշուետու կամ պատասխանատու:
8. Զուրի ընթացք - Պակաս:
9. Մանր որդ - Աւագակ - Իգական ճնշ:
10. Երկարակամ դից - Կտանսք քաղաքի նախկին անունը:
11. Գիշակեր գազան - Այրուբենէն - Համառու թիւն:

ԹԻՒ 5344 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ. Includes a crossword puzzle grid and a list of words.

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ տար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն են...

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՈՍԿԻ', 'ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԾՈՒՂԹԵՐ', 'Ա. կարգ', 'Բ. կարգ'.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒԻԶԱ ՊԵՔԵՐԵՃԵԱՆԻ (Ծնեալ՝ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ) մահուան քառասունընց առիթով...

ՏԻՆՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ՏԻՆՆԻ (21 Մարտին 20 Ապրիլ) Գործի մը ձեռնարկելու անոց լաւ տեղեկութիւններ քաղեցէր հարցերը ճիշդ կարգադրելու: Զգուշացէր չհնախտեսուած անպատեհութիւններէ եւ անոցը անէր ուրիշներու միջամտութեան:
ՏԻՆՆԻ (21 Ապրիլէն 21 Մայիս) Բնաւ դժուարութեան մի մտնուիք ձեր վտանգի ինքնութիւնը ծանօթացնելու կամ հաւատալ տալու ձեր անկեղծութիւնը: Ձեր շուրջիները ձեզ շատ լաւ կը ճանչնան եւ կը գնահատեն ձեր բարեխղճութիւնը:
ՏԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) Օգտուեցէր ձեր մտնուողն կամ կնոջ հետ ձեր ունեցած սքանչելի համերաշխութեան եւ իրագործեցէր ձեր որոշած ծրագիրները, որոնք կատարելապէս լաւ ելք պիտի ունենան:
ՏԻՆՆԻ (22 Յունիսէն 23 Յունիս) Ձեր կրնար ձեր ծրագիրները փոխանցել ձեր անմիջական շրջանակին, զանոնք մասնակից դարձնելու ձեր մտածումներուն, բայց դուք կը վախճար, որ անոնք ծիծաղին ձեր վրայ: Ինչու է դուք ձեզ կը թերագնահատէք:
ՏԻՆՆԻ (24 Յունիսէն 23 Օգոստոս) Ձեր սկսած գործը շարունակեցէր, ինչ որ որոշած էր այսօրուան համար, կատարեցէր, ձեր սկսած նամբայնքն ետ մի դառնաք, որովհետեւ այսօր պիտի ըլլաք անպարտելի:
ՏԻՆՆԻ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ձեր մէկ ծրագիրին մասին շատ կը խօսիք ձեր շուրջիներուն՝ զանոնք գինովցնելու աստիճան: Լաւ կ'ընէք, եթէ այդ մասին քիչ խօսիք եւ շատ գործէք:
ՏԻՆՆԻ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Աշխատանքի մէջ դուք ձեզ շատ անոց մի նետէք, որովհետեւ ձեր յանգանութիւնը կրնայ ձեզի դժմ լլլել: Ձեր անհատկանութիւնը արդէ մատուց գոյց կը տրուի:
ՏԻՆՆԻ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Փոխանցումի հարց մը դիւրութեամբ պիտի կարգադրուի՝ յանկարծակիի բերելով ձեզ: Ուրեմն ապահով եղէք, որ կրնաք նոր իրագործումներ կատարել:
ՏԻՆՆԻ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Այսօր պիտի օգտուիք դրամական շահէ մը, բայց ասիկա պատճառ մը թող չըլլայ միտելու ձեր ունեցածը՝ շուկային մէջ երկար շրջագայելով:
ՏԻՆՆԻ (21 Դեկտեմբերէն 20 Յունիս) Ձեր գործակիցին կամ ձեր կողակիցին խրատները կամ միտքերը կը լսէք մէկ ակնցնով, ու ասիկա հանելի պիտի չընէք անոր: Համբարշտ եղէք:
ՏԻՆՆԻ (21 Յունուարէն 19 Փետրուար) Ձեր գործակիցներուն հետ լաւ ժամանակ պիտի անցընէք աշխատանքի վայրի մէջ: Ձեր գուրբ տրամադրութիւնը պիտի ազդէ գործի արդիւնաբերութեան:
ՏԻՆՆԻ (20 Փետրուարէն 20 Մարտ) Ամէն գործ դիւրին պիտի ըլլայ այսօր, ձեր ծրագիրները պիտի իրագործուին հեզասահ կերպով, ինչ որ մեծ գոհունակութիւն պիտի պարգեւէ ձեզի:

ՕՐԱՏԵՏՐ ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳԱՀԱՆԴԵՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԱԺԻՇՏ ՇՈՆ ՖԻԼԻՓՍ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՉ

Յաջողական երեք օրերու վրայ երկարող ծրագիրով մը, ամերիկացի կիրառական եւ ուրբ քառույթի եւ ուրբ երաժշտական սեներու մեկնարան Շոն Ֆիլիպս 16, 17 եւ 18 Յունուարին էլոյթ պիտի ունենայ «Սըրքա» զինքնաշարժի սպասարարի մէջ: Թերաս ծնած այս երաժիշտը կիրառական եւ նուագել է շարժարարական հիմնականին մէջ եղած է ուրբաշարժի, սակայն հետաքաշին ան որդեգրած է ձեւ, փրկուիլու եւ փոփ երաժշտական ոճերը: Շոն Ֆիլիպս կը պատկանի եօթանասունականներու երաժիշտ - մեկնարաններու սերունդին: Ան իր ետին ունի շուրջ տասնհինգ ձայնավորականներ, որոնց նկատմամբ երաժշտական քննադատները արտայայտուած են դրական կերպով: Այսօր տասնամեակներուն Շոն Ֆիլիպս հանդէս եկած է երաժիշտի եւ Միացեալ Նահանգներու տարածքի քաղաքի էլոյթներու ընթացքին, մասնակցած է երաժիշտական միջազգային փառատօներու, ինչպէս նաեւ յորինած է ժապաւններու երաժիշտութիւն:

Մուսթաֆա Ֆարուքի նուիրած ցուցահանգէս, Սըրքա քաղաքին մէջ, ժամը 10:00էն մինչեւ ժամը 13:00, երկուշաբթի 16:00էն 19:00, մինչեւ 8 Մարտ:
Քաղաքի հաւաքական ցուցահանգէս «Փրիքս» մաս, «Ալի Նոգապէր» ցուցարահին մէջ, մինչեւ 31 Յունուար:
Պարսից ներկայացում. «Քաղաքային» «Տեօ միլի» ինչ նուիր, ժամը 20:00ին, «Պիլ» մէջ: Ելոյթները կը շարունակուին մինչեւ 31 Յունուար:

ՀԵՌԱՏԵՍԻԼ

Table with 3 columns: Time, Program Name, and Channel. Lists various TV programs and their broadcast times.

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԿՐԻՆՈՒՄ 16 ՅՈՒՆ. 1953



ՆԵՍԱՐԵՐԱԿԱՆ ԱՌՈՂՁ ՄԱՐԴ ՄԸ 14 ՏԱՐԻ ՅԻՄԱՐԱՆՈՅ ՄՆԱՅ ԵՒ ՀԱՐՍԱՑԱԻ...

Մերիլեմտեան հանգանակ կոչուած ծովային սպայ մը՝ ձորք Ռիվ, վերջերս իր առաջին քայլերը առաւ մահկանացուներու աշխարհին մէջ, որմէ կամաւորապէս բաժնուած էր 24 տարի ի վեր, յիմարանցի մը մէջ ապրելու համար: Պատմութեան գարմանալի կողմը այն է, որ ձորք Ռիվ միշտ անողջ մտքով, ինքնաբաւ, անկախ եւ վայելուց մարդուկ մը եղած էր իր սովորական մահկանացուի կեանքին մէջ: Պատմութիւնը սպասուսկա... 1938ին ձորք Ռիվ անցան արկածի մը պատասխանատու համարելով՝ ձորք քաղաքէն եւ դատարանի յանձնուած էր: Կա մ 600 տուրքի տուգանք մը պիտի վճարէր եւ կամ Սփրինկ կրովի հոգեբու-ժական հիւանդանոցին մէջ կարճատեւ շրջան մը պիտի բուրբէր: ձորք նախընտրեց հիւանդանոցը, ուր մնաց 14 տարի:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ԱՅՍՕՐ Հ. Մ. Ը. Մ. - ԱԸՍՈԼ ԺՈՒՆԻԷ

Լիբանանի պասեթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան դարձի առաջին հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ.ի ներկայացուցչական խումբը, այսօր Հ. Մ. Ը. Մ.ի «Ատոմ եւ Սելլա Թանուկեան» մարզադաշտին վրայ կը հիւրընկալէ Ռքուլ Ժունիէն: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 21:00ին:

Երթին, Ռքուլէն 69-61 արդիւնքով պարտութիւն կրած Հ. Մ. Ը. Մ.ի տղաքը, այժմ ընդհանուր դասաւորման մէջ կը գրաւեն 8րդ դիրքը: 9 մրցում կատարած, Հ. Մ. Ը. Մ. որ արձանագրած է 4 յաղթանակ եւ կրած՝ 5 պարտութիւն, այժմ ունի 17 կէտ:

Հ. Մ. Ը. Մ.ի մարզիկներէն կը սպասուի մոռնալ երթին իրենց արձանագրած ոչ համույիչ արդիւնքները եւ նոր էջ մը բանալով դարձի բոլոր մրցումներուն անխնայ ըլլալ իրենց մրցակիցներուն նկատմամբ եւ բոլոր մրցումներուն ալ յաղթանակներ արձանագրել, ինչ որ ալ ըլլան պայմանները:

Խումբին արձանագրած յաղթանակին մէջ վստահաբար, որ իրենց մեծ բաժինը ունին կատարելիք Հ. Մ. Ը. Մ.ի համակիրները, որոնք պէտք է անոր կատարած իւրաքանչիւր մրցումին դաշտ ներկայանալով քաջալերել Հ. Մ. Ը. Մ.ի հնգեակը: Նշենք, թէ մրցումներուն մուտքը ձրի է:

ՍՏՈՐԵԻ՝ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի կ'ունենան այսօր).

ԺԱՄ	ԴԱՇՏ
ՍԷՃ ԺՈՂԷՖ - Լիբ. Բանակ 19:00ից	ՍԷՃ ԺՈՂԷՖ
Հ. Մ. Ը. Մ. - Ռքուլ Ժունիէ 21:00ից	Մըզհէր
Նաժմար - Թատ. Ջուր 21:00ից	Շանգիլ
ԱԳ. Ռիատի - Շ. Միզիար 21:00ից	Զահրայա
Ռիատի - Ֆէյթրուց - ԱԳՆուպից 21:00ից	Սաժեւ

ՍՏՈՐԵԻ՝ Հ. Մ. Ը. Մ.ի արձանագրած մրցումներուն արդիւնքները.

Ռքուլ Ժունիէ - Հ. Մ. Ը. Մ.	69-61
Հ. Մ. Ը. Մ. - Նաժմար	70-87
Միզիար - Հ. Մ. Ը. Մ.	70-56
Հ. Մ. Ը. Մ. - Ռիատի Ֆէյթրուց	69-70
Լիբ. Բանակ - Հ. Մ. Ը. Մ.	65-81
Հ. Մ. Ը. Մ. - Ֆիտաւ Սայտա	72-66
Հ. Մ. Ը. Մ. - ՍԷՃ ԺՈՂԷՖ	61-72
Հ. Մ. Ը. Մ. - ԱԳիա Ռիատա	81-56
Թատամոն Ջուր - Հ. Մ. Ը. Մ.	56-77

ՍՐՅ. Յ. Պ. ԿԵՏ	ՆՇ.	ՍՏ.				
1.- Նաժմար	10	8	2	26	699	534
2.- Միզիար	10	7	2	23	633	502
3.- Ֆէյթրուց	10	6	4	22	752	744
4.- Թատամոն	10	6	4	22	697	708
5.- ՍԷՃ ԺՈՂԷՖ	10	6	4	21	659	620
6.- Ռքուլ	10	5	5	20	664	705
7.- ԱԳիա	10	4	6	18	617	659
8.- Հ. Մ. Ը. Մ.	9	4	5	17	629	611
9.- ԱԳՆուպից	7	2	5	13	389	442
10.- Ֆիտաւ	9	2	7	13	648	733
11.- Լիբ. Բանակ	8	1	7	10	533	662
12.- Այնթուրա	0	0	0	0	0	0

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՍԸ...

Շարունակուած 4րդ էջէն

ներու յաջողութիւնը կը պայմանաւորուի բովանդակութեան յատկութեամբ: Նախընտրելի է միաժամանակ չքննել բազմաթիւ խնդիրներ եւ մասնակիցներու ուշադրութիւնը կենդանացնել առանցքային հարցերու վրայ: Անոնք պարզ են եւ կրկնուած. Հայաստանի շրջափակում, ինքնորոշուած Արցախի ճանաչում, հայոց կրած ցեղասպանութեան ճանաչում՝ ընդունելով անշրջանցելի հետեւանքները, խորհրդային համակարգէ դուրս եկած փրկուած տնտեսութեամբ Հայաստանի վերականգնում:

Ինչպէս ալ պարագայի մը ըսած է հայրենի պատմաբան Լենգրուշ Խորշուդեան, այս նախաձեռնութիւնները, յաջողելու համար, պարտին ըլլալ վերադասակարգային եւ վերակազմակերպչական: Տրամաբանութիւնը պարզ է: Հայաստանի կամ Սփիւռքի տեղական հարցերը նման խորհրդաժողովի նիւթ չեն, անոնք ըլլան նախագահի թէ երեսփոխանի ընտրութիւն: Այլապէս կը նսեմանայ ժողովը, եւ մասնակիցները իրենց երկիրները կը վերադառնան շահագործուած ըլլալու բացասական վզացումներով:

Փրօ - Արմենիա Խորհրդաժողովը նոր դարու սեմին սկիզբ մըն է, ոչ վախճան: Ժողովի անդամները չ'իջնէր վարագործել, եւ կը լուսամ, որ կը բացուին նոր հիմներ վրայ, նոր ռոնով համագործակցութիւններու կարելիութիւններ:

Ինչպէս ըսինք, ցանկութիւններու եւ խոստումներու հաշտեցումը պէտք է ընել՝ մեկնելով արդիւնքէն:

ԱԿՍՏՐԱԼԻՈՅ ԹԵՆԻՍԻ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՆՅԱԻ Գ. ՇԱՆԳՐՈՒԱՆ

Աւստրալիոյ մէջ տեղի ունեցող թենիսի կրան շիֆի տղոց բաց մրցաշարքին Բ. հանգրուանի մրցումներուն, որոնք սկսան երէկ, Հայաստանէն Սարգիս Սարգսեան ապահովեց Գ. հանգրուանին իր տոմսը, հաւանաբար անոր որ ան արժանիքիցի կասթոն կատարուի դէմ տեղի ունեցած մրցումի առաջին սէթին 6-2 արդիւնքով պարտուած էր: Մրցումը վերջ գտաւ ի նպաստ Սարգսեանի՝ 2-6, 7-5, 6-2 եւ 6-2 արդիւնքով:

Հայրենի մարզիկը Գ. հանգրուանի մրցումներուն պիտի ձակարկուի աստրալիացի Մարք Ֆիլիպուսի դէմ:

2րդ դասուած ամերիկացի Անտրէ Ակասի հանգիստ շատ յաղթանակ մը արձանագրեց, երբ 6-1, 6-0 եւ 6-0 արդիւնքով պար-



Սարգիս Սարգսեան

մը 11:00ին՝ Պէյրութի ժամանակացոյցով:

29.- Նիքոլայ Էսփրտը (Յրանսա) - Քրիսթոֆ Ռոշիւ (Պէլճիքա) 1-6, 6-2, 6-2 եւ 6-4

ԱԳՉԻԿՆԵՐ

5.- Ճասթին Հենիս - Հարտէն (Պէլճիքա) - Աննա Քուրնիքովա (Ռուսիա) 6-0 եւ 6-1

Վիրժինիա Ռուանօ Փասքուալ (Սպանիա) - 30.- Ժանէթ Հուսարա (Սլովաքիա) 5-7, 7-5 եւ 6-0

7.- Տանիէլա Հանթրովա (Սլովաքիա) - Ատրիանա Սերրա Չանեթթի (Իտալիա) 7-6 եւ 7-6

23.- Փաուլո Սուարէս (Արժանթին) - Թաթիանա Կարպին



Ճասթին Հենիս-Հարտէն

տուութեան մատնեց իր մրցակիցը՝ Հիունկ-Թաիք Լին (Հարաւային Քորէա):

Տղոց Բ. հանգրուանի երկուսն մրցումներուն մեծագոյն անակընկալը ստեղծեց ֆիլիպինացի Եարքո Նայմիւնը, որ յաջողեցաւ մրցաշարքին դուրս ձգել ռուս Ելզենի Քաֆէլնիքովը (դասուած՝ 22րդ), արձանագրելով 6-3, 6-3, 3-6, 4-6 եւ 6-1 արդիւնք մը:

Աղջկանց Բ. հանգրուանի մրցումներուն, 2րդ դասուած ամերիկացի Վինս Ուիլիքսն ապահովեց Գ. հանգրուանի մրցումներուն իր տոմսը, 6-3 եւ 6-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք իր պակսիցը՝ Էսալի Քարթիլը:

Սովորական ինչն է, որ Բ. հանգրուանի մրցումներուն շարքէն կանուխ հեռացաւ 6-0 եւ 6-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Տրոյ դասուած պէլճիքացի Ճասթին Հենիս - Հարտէնէն:

Յրդ դասուած ամերիկացի Լինստէյ Տէվընփորթ իր կարգին ապահովեց Գ. հանգրուանին իր տոմսը (ինչպէս 6-7, 6-4 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնելով իրոտա Թուլիա կանովան (Ուլպէթիստան):

Տղոց Բ. հանգրուանի մրցումներուն, որոնք կը շարունակուին այսօր (ինչպէս 6-7, 6-4 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնելով իրոտա Թուլիա կանովան (Ուլպէթիստան):

Տղոց Բ. հանգրուանի մրցումներուն, որոնք կը շարունակուին այսօր (ինչպէս 6-7, 6-4 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնելով իրոտա Թուլիա կանովան (Ուլպէթիստան):



ԱԳՆԱ Քուրնիքովա, որ գայրացած կը թուի ըլլալ իր կրած պարտութեամբ

4.- Խուան Քարլոս Ենթրօ (Սպանիա) - Ժան-Ռիւնէ Լիւնսը (Յրանսա) 6-0, 6-4 եւ 6-2

8.- Ալպէր Քոսթա (Սպանիա) - Սքոթ Տրէփըր (Աւստրալիա) 6-4, 6-7, 6-2 եւ 6-3

24.- Նիքոլայ Լաֆալէթի (Էստոնիա) - Տալիտ Սանչէս (Սպանիա) 6-1, 6-0, 2-6 եւ 6-2

Ռէյն Ֆերէյրա (Հարաւային Ափրիկէ) - Միշէլ Քրաթշվիլ (Չեխիա) 6-2, 6-2 եւ 7-5

2.- Անտրէ Ակասի (Մ. Ն.) - Հիունկ-Թաիք Լի (Հարաւային Քորէա) 6-1, 6-0 եւ 6-0

Եարքո Նայմիւնը (Ֆիլիպինա) - 22.- Ելզենի Քաֆէլնիքով (Ռուսիա) 6-3, 6-3, 3-6, 4-6 եւ 6-1

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ - ԱԳՉԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ (Հայաստան) - Կասթոն կատարուի (Արժանթին) 2-6, 7-5, 6-2 եւ 6-2

28.- Ֆապրիս Սանթրօ (Յրանսա) - Ռէյն

ՀԱՆՐԻ ՄԻՇԷԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ



Հանրի Միշէլ

Հայաստանի ֆուտբոլի ֆետերատիոնի նախագահ Ռուբէն Հայրապետեանի հրաւերով, երէկ երեւան ժամանեց Ֆրանսայի ֆուտբոլի ազգային խումբին նախկին մարզիչ Հանրի Միշէլ:

Ծանօթ է արդէն, որ արժանիքիցի մարզիչ Օսքար Լուիէլի պաշտօնազրկումէն ետք, Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը այժմ կը մնայ առանց մարզիչի:

Հայաստանի ֆուտբոլի ֆետերատիոնը, որ այժմ բանակցութիւններու մէջ է ֆրանսացի անունի մարզիչին հետ, պիտի փորձէ համաձայնութեան մը գալ անոր հետ, որպէսզի խումբը ունենայ իր նոր մարզիչը եւ այդ մէկը՝ ամէնէն կարճ ժամանակամիջոցին:

ԻՆՉՊԵՍ նախորդ տարիներուն, այս տարի եւս Հայաստանի ֆուտբոլի ֆետերատիոնին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 12 խումբեր:

Հայաստանի ֆուտբոլի ֆետերատիոնին կողմէ ճշդուած պայմանագրով այժմ անցած է մէկ ամիս եւ տակաւին այդ 12 խումբերէն երկուքը՝ «Չուարթնոց» երեւան եւ «Լեռնագործ» Կապան տակաւին յստակ չեն դարձուցած, թէ արդէոք պիտի մասնակցին ախոյեանութեան, թէ ոչ:

Նոյնիսկ ակումբի մը չմասնակցելու պարագային, ոչ թէ միայն յայտագիրը փոփոխութիւն պիտի կրէ, այլեւ ախոյեանութիւնը պիտի յետաձգուի:

Նշենք, թէ այս տարի, ըստ ՖԻՖԱին եւ ԵՈՒ.Է.Է.Ֆ. Ա.ին պահանջներուն, պիտի սկսի անոնց անդամ բոլոր երկիրներուն՝ որոնց կարգին Հայաստան, ակումբներու արտօնագիր ստանալու գործընթացը:

ՖԻՖԱին մէկ պատասխանատուն յայտնեց, թէ Հայաստանէն կարեն Նայպանտեան եւ Գէորգ Յովհաննիսեան, ՖԻՖԱին կողմէ կարճաժամանակուած են միջազգային բարձր դասակարգի իրաւարարներու շարքին: Իսկ Հայաստանէն ետք ալ իրաւարարներ ճանչցուած են որպէս կողմի իրաւարարներ:

Առաջին անգամ, Հայաստանի երեք իրաւարարներ՝ Ժան Աւետիսեան, Վլադիմիր Պլաշեան եւ Սամուէլ Մարգարեան ստացել են մինի - ֆուտբոլի միջազգային իրաւարարներու արտօնագիր: Իսկ առաջին անգամ Քնարիկ Գրիգորեան իրաւունք ստացած է աղջկանց միջազգային մրցաշարքերու իրաւարար որպէս նկատի ունենալ:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆուտբոլի մարզիչներէն մէկը եւ 14էն 16 տարեկան երեք ֆուտբոլիստներ, Հայաստանի ֆուտբոլի ֆետերատիոնին կողմէ մեկնեցաւ Սան Փաուլօ (Պրաչիլ), այդ նոյնատուն ակումբին հետ յատուկ փորձեր կատարելու համար:

ՖԻՖԱԻ ԴԱՍԱԴՈՐՈՒՄ

ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՍՈՒՐԻԱ ԲԱՐՁՐԱՑԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ՆԱՀԱՆՋԵՑ

ՖԻՖԱՆ երէկ հրապարակեց այս ամսուան ֆուտբոլի ազգային խումբերու ընդհանուր դասաւորումը, որ 2003ի առաջինն էր:

Պարագուուի առաջին հինգ դիրքերը բաղդատմամբ անցաւ ամսուան մնացին անփոփոխ: Լիբանանի ֆուտբոլի ազգային խումբը 119րդ դիրքէն բարձրացաւ 109րդ դիրք, իսկ Սուրիա 91րդ դիրքէն 88րդ դիրք:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը սակայն երեք դիրքի նահանջ մը արձանագրեց եւ այժմ կը գրաւէ 110րդ դիրքը:

Ստորեւ՝ առաջին տասը դիրքերը գրաւողներուն եւ կարգ մը կարեւորագոյն երկիրներուն գրաւած դիրքերը (փակագծին մէջ՝ նշուած են անոնց անցաւ ամսուան գրաւած դիրքերը).

ԿԵՏ	ԿԵՏ
1. Պրաչիլ	(1) 856
2. Յրանսա	(2) 787
3. Սպանիա	(3) 780
4. Գերմանիա	(4) 765
5. Արժանթին	(5) 750
6. Հոլանտա	(6) 746
7. Թուրքիա	(7) 736
8. Անգլիա	(8) 734
9. Մեքսիքա	(9) 732
10. Միացեալ Նահանգներ	(10) 723
.....
88. Սուրիա	(91) 462
.....
107. Մալդիւ	(127) 407
.....
109. Լիբանան	(119) 403
110. ՀԱՅԱՍՏԱՆ	(107) 399

ՌՈՒՍԻԱ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ, ՈՐ ՊԵՏԻ ԿԱՌՈՒՅԷ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՀԱՆ ՄԸ

Ռուսիա երկն առաջին անգամ ըլլալով յայտարարեց, թէ կը ծրագրէ հրթիռային պաշտպանութեան վահան մը կառուցել՝ նման Մ. Նահանգներու վիճելի առաջարկներուն:

Պաշտպանութեան նախարար Սերգեյ Իվանով յայտնած է, թէ Ռուսիա անպայման պիտի կառուցէ ցամաքային պաշտպանութեան եւ օդային տարածքի պաշտպանութեան դրոշմները:

Ան աւելցուցած է, որ Մոսկուայի կ'արտօսուի նման հեռու հասողութեան դրոշմներ մը մշակուի, Մ. Նահանգներու անցեալ տարուան որոշումէն ետք՝ միակողմանի կերպով քաշուելու 1972ի միջցամաքամասային հրթիռներու համաձայնագիրէն (Էյ. Պի. Էմ.), որ կ'արգիլէր հրթիռային ընդհանրական վահաններ:

Միւս կողմէ, Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ Կրաքեան գէ 2 շուրջ 450 միլիոն տար օգտագործել՝ օգնելու համար Ռուսիոյ, որ փճացնէ անխնայ աւելի գողցուելու հասանակաւորութիւն ունեցող քիմիական իր պէտքերը, արգիլելու համար անոնց տարածելու ձեռքը հասնելու կարելիութիւնը:

Գումարը պիտի գործածուի Սիպերիոյ Շչուչիէ քաղաքին մէջ քիմիական պէտքերու փճացման գործարարի մը կառուցման համար: Երկրային այդ քաղաքին մէջ պահ դրուած են 2 միլիոն կապով լեցուն հրասայի հրթիռներ եւ «Սքուտ» հրթիռները գուրուներ:

(ԱՅՓ)

ՊԱՂԵՍԻՆՅԻՆԵՐ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՆ ՄԵԱԿԵԼ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Երեք պաղեստինցիներ սպանուեցան Այսրիորդանանի մէջ՝ իսրայէլեան բանակին գիշերային արշաւներէն մէկուն ընթացքին: Պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ հաղորդեցին, որ ժենիսի հարաւ գտնուող Քապաթի գիւղին մէջ սպանուեցան երկու պաղեստինցիներ, որոնցմէ մէկը 16ամեայ պատանի մըն էր: Պաղեստինեան աղբիւրներուն համաձայն, պատանին կը քարկոծէր իսրայէլացի պահուստները, որոնք սակայն կը պնդեն, որ ան հրձիգ ումբեր կը նետէր իրենց վրայ: Երկրորդ զոհը 44 տարեկան պաղեստինցի մըն էր, որ կանգնած կը դիտէր քաղաքը: Իսրայէլեան ուժերը պաղեստինցի պատանի մըն ալ սպանուցին թուրքարմի գաղթականին մէջ: Իսկ իսրայէլեան ուժերը յաջողեցան ձերբակալել չորս ծայրայեղականներ: Բանակին մէկ բանբերը յայտնեց, որ իսրայէլեան ուժերը աւելի քան քսան հոգի ձերբակալած են Այսրիորդանանի այլապէս շրջաններու մէջ:

Արաքաթ ապստարձակէ ԷՖ. Փէ. Էլ. Փէ.ի ղեկավար Ահմետ Սատարը, որ ձերբակալուած էր մէկ տարի առաջ:

ՊԱՂԵՍԻՆՅԻՆԵՐ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԵԱԿԵԼ

Պաղեստինցի քարձրաստիճան պաշտօնատարներ, որոնք գրկուեցան Լոնտոնի խորհրդածոյողին մասնակցելու, խոստացան մինչեւ այս ամսուան վերջաւորութիւնը պատրաստուել պաղեստինեան իշխանութեան սահմանադրութեան սկզբնական օրինակ մը, յայտնեց Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը:

Նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը կը նշէր, թէ պաղեստինցիներ խոստացած են մշակել սահմանադրութիւն մը իմաստով ժողովրդավարութեան, բազմակուսակցութեան, օրէնքի իշխանութեան, դատական իշխանութեան անկախութեան եւ անհատական պատուութեան պաշտպանութեան սկզբունքներուն վրայ:

Արտաքին գործոց նախարար Ճէք Սթրոու, որ պաղեստինցի պաշտօնատարներ վիսօ հաղորդակցութեան միջոցով յաջողեցան հետեւի խորհրդածոյողին եւ իրենց տեսակետները արտայայտել:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն արգիլած էր պաղեստինցի պաշտօնատարներուն Լոնտոն մեկնումը: Լոնտոնի երկօրեայ խորհրդածոյողին կը մասնակցին իսրայէլական միջազգային քառարկայի անդամները եւ արաբական կարգ մը երկիրներու ներկայացուցիչներ: Խորհրդածոյողը կը քննարկէ պաղեստինեան քաղաքականութեան մասին:

Իսրայի արտաքին գործոց նախարարութիւնը այցելուութիւնը այցելուութիւնը յայտարարած էր Կիրակի օր՝ նշելով, որ երկու ղեկավարներ պիտի արժարծեն շրջանային իրադարձութիւններն ու յատկապէս՝ Իրաքի դէմ պատերազմի մը սպանալիքը:

(ԱՅՓ)

ՀԻՄՆԱՅԻՆ ՔՈՐԵԼ

ԿՈՐԻԶԱՅԻՆ ՏԱԳՆԱԴՐՈՒ ԴԵՊԻ ԼՈՒԾՈՒՄ

ՊԵՅՅԻՆԿ, 15 (ԱՅՓ).- Քորեական կորիզային տագնապին լուծման յոյսերը թափ ստացան Չորեքշաբթի օր, մինչ Մ. Նահանգներու բարձրատիճան պատուիրակ ձեյմս Քեյլի տեսակցութիւն կ'ունենար Հիւսիսային Քորեայի գլխաւոր դաշնակից Չինաստանի վարչիւններուն հետ, իսկ նախագահ Ճորձ Պուշ օժանդակութեան մասին կը խօսէր Փիոնկեանկի՝ անոր կորիզային ծրագրի մասին:

Քեյլի տեսակցութիւն ունեցած է պաշտօնատարներուն հետ, ներառելով Չինաստանի արտաքին գործոց փոխ նախարար Լի ժաօյինկի հետ:

Սակայն Ուաշինգթոնի Ասիոյ մէջ բարձրատիճան դիւանագետը մերժած է ըսել, թէ ինչ կրնայ խնդրել Պեյճինկէն, որ ընդ կամ էր Մ. Նահանգներ ապահովութեան երաշխիքներ կամ խայծեր պիտի առաջարկէ Փիոնկեանկի, որպէսզի մնակա հրաժարի իր կորիզային փառախորտիւններէն:

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԻՐԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԶՆՋՈՒԵՑԱԻ

ԹԵՀՐԱՆ, 15 (ԱՅՓ).- Սուրիոյ նախագահ Պաշար Ասադի Իրան այցելութիւնը, որ նախատեսուած էր Չորեքշաբթի օրուան (երէկուան) համար, ջնջուեցաւ, յայտնեց Իրանի պաշտօնատար մը, որ քաղաքականութեան շուտաւ ջնջումին մասին, թէեւ սուրիացի պաշտօնատարներ ըսին, որ թեհրան թիրիմացութեամբ մը սխալ հասկացած էր այցելութեան թուականը: Իրանի պաշտօնատարներ չըսին սակայն, թէ այլ թուական մը տեղի պիտի ունենայ այցելութիւնը:

Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը այցելութիւնը յայտարարած էր Կիրակի օր՝ նշելով, որ երկու ղեկավարներ պիտի արժարծեն շրջանային իրադարձութիւններն ու յատկապէս՝ Իրաքի դէմ պատերազմի մը սպանալիքը:

(ԱՅՓ)

ԶԷՆՔԻ ՔՆՆԻՉՆԵՐԸ ՔՆՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջն

Թիւններուն միացեալ կեցուածք որդեգրելու՝ խոստափելու համար Իրաքի դէմ պատերազմէ մը:

Այն պահուն, երբ Պուշ սպառնալիք կ'ուղղէր, ՄԱԿի քննիչները կը շարունակէին քննութիւնները Իրաքի մէջ, ուր երէկ քննութեան ենթարկեցին Սատտամի նախագահական ապարանքներէն մէկը, որ Պաղտատի մէջ կը գտնուի: Նոյնմբերէն ի վեր, քննիչները երկրորդ անգամ ըլլալով կը խուզարկեն նախագահական պալատ մը, ուր մուտքը արգիլուած էր 1998էն առաջ կատարուած քննութիւններուն ընթացքին: Ապահովութեան խորհուրդի թիւ 1441 բանաձեւը այս իրաւունքները տուած է քննիչներուն: Պաղտատի Հանրապետական Պալատը, գոր այցելեցին քննիչները, քանիցս մերժուեցան էր 1991ի պատերազմին: Քննիչները աւելի քան չորս ժամ մնացին պալատը, ուրկէ դուրս գալէ ետք յայտարարութիւն չկատարեցին:

Միւս կողմէ, Պուշի ազգային անվտանգութեան հարցերու խորհրդատու Քոնտոլիցա Ռայս հանդիպում մը ունեցաւ ԱՆՍՈՎԻՔԻ գլխաւոր քննիչ Հանս Պիքսի հետ: Ռայս Պիքսին պահանջած է Իրաքէն դուրս հանել գիտնականները, որպէսզի կարենայ գանձը հարցուփորձել՝ հետո Պաղտատի իշխանութիւններէն: Պիքս սակայն մտադիր չէ ընդառաջելու ամերիկեան պահանջին:

● ՀԻԻԼԷՍԿԱՆ ՌԵՃԱՆԻՔԻ միջազգային գործակալութեան տնօրէն Մոհամէտ Պարատի գոուշացուց իրաքը՝ նշելով, որ ամբողջ աշխարհը դարձած է անհամբեր: Պարատի կող ուղղեց Իրաքի գործօն գործակալութիւն ցուցաբերելու եւ փաստելու, թէ հաւաքական քանդումի գէները չունին:

● ՌՈՒՍԻՈՅ պաշտպանութեան նախարար Սերեյ Իվանով հերքեց, որ Մոսկուա մտադիր է մարտանաւեր եւ զինուորական ուժ ուղարկելու Մոց՝ պատրաստ ըլլալու համար հաւանական պատերազմի մը:

● ԻՐԱՆ եւ Ռուսիա երէկ վերստին շեշտեցին, թէ իրաքեան տագնապը դիւանագիտական խաղաղ միջոցներով պէտք է լուծուի:

● ԵԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսնի Մուսարաբ ըսաւ, որ արաբական երկիրներն ու թուրքիա կը փորձեն գանձել լուծում մը, որ ընդունելի ըլլայ եւ Ուաշինգթոնի եւ Պաղտատի համար, որպէսզի կարելի ըլլայ խոստափել պատերազմէ մը:

● ԻՐԱՔԵԱՆ «Սաուրա» պաշտօնաթերթը գոուշացուց, որ Պաղտատի դէմ յարձակում մը «մահացու» պիտի ըլլայ Միացեալ Նահանգներուն համար:

(ԱՅՓ)

Atelier D'art

Գծագրութեան դասընթացքներ

- * 6 էն 17 տարեկան պատանիներու համար:
- * Կուսուցանեն գծանկար, ջրաներկ, կուաշ, իւղաներկ, մարկակազմութիւն, արուեստի պատմութիւն videoի վրայ:
- * Հաւաքական ցուցահանդէս:
- * Դասընթացքի տեւողութիւն՝ հինգ ամիս, 25 Յունուարէն 28 Յունիս, ամէն Շաբաթ օրերը կէսօրէ առաջ ժամը 10էն 12:30 եւ կէսօրէ ետք ժամը 3էն 5:30:
- * Սակ՝ 200\$ դասընթացքի լման տեւողութեան (առանց այլեայլ վճարումներու):

Արձանագրութեան համար ներկայանալ Atelier D'art-ի գրասենեակը ամէն օր կէսօրէ ետք ժամը 5էն 7:

Պուրճ Համուտ Արմենիա պողոտայ, Սարդարապատ շէնք, 2րդ յարկ «Ճոն Մայքլ»-ի վրայ, Հեռ. 01-268949 / 03-835078

EURO STYLE

Hairwash+Highlighting
Hair Coloring
Head Massage
Bain d'Huile
Permanent Curls

Salon for Men
European Specialists

Առաջին անգամ ըլլալով
Լիբանանի մէջ

Haircut+Hairwash+Brushing	12,000 LL
Haircut for kids	8,000 LL
Hairwash+Brushing	5,000 LL
Highlighting	25,000-30,000 LL
Hair Coloring	25,000 LL
Head Massage	8,000 LL
Bain d'huile	5,000-8,000 LL
Permanent Curls	25,000-30,000 LL

Christmas offer
until January 10 - 2003
50% discount

Զայլայի հրապարակ. Բաղաւաղարանի դիմաց. BREEZVALE HOUSE Mediterranean դրամատան կից, Ա. յարկ, հեռ. : 01 / 892081

ՊԱՆՔԻՍԻ ԿԻՐՈՒՆ ՄԵՋ

ՉԵՉԵՆ ԸՍԲՈՍՏՆԵՐ ԿՐԱՆ ՄԱՅԱՑՈՒ «ՌԻՍԷՆ» ԹՈՅՆԸ ԱՐՏԱԴՐԵԼ

Վրաստանի անվտանգութեան նախարարութիւնը երէկ յայտնած է, որ երկրին օրէնքէ դուրս գործող Փանքիսի կիրճին մէջ հաստատուած չեչեչ անջատողական ըմբոստներ կրնան կարողութիւնը ունեցած ըլլալ մահացու «ռիսէն» թոյնը արտադրելու:

Նախարարութեան բանբերը՝ Նիքա Լալիաշվիլի, որեւէ փաստ չէ ներկայացուցած, սակայն ան յայտնած է, թէ իշխանութիւնները չեն անտեսել այդ կարելիութիւնը, որովհետեւ յարաբերաբար դիրքին է այդ թոյնին արտադրութիւնը: Անիկ բնականօրէն կը գտնուի բոյսի մը հատիկներուն մէջ:

«Ռիսէն»ի առնչութեամբ մտավախութիւնները բարձրացած էին այս ամսուան սկիզբը, երբ սուրիական թոյնը Լոնտոնի մէկ յարկաբաժնի մէջ թոյնի հետքեր գտած էր՝ յանգեցնելով հիւսիսային ամերիկեան ծագումով 7 հոգիի ձերբակալութեան:

Անվտանգութեան նախարար Վալերի Խապուր-Կանիա յայտնած է, թէ Լոնտոնի մէջ ձերբակալութիւնները կրնան վրացական գաղտնի սպասարկութեանց եւ անոնց արեւմուտքի պաշտօնակիցներուն միջեւ գործակցութեան արդիւնք ըլլալ:

Բանբերը յայտնած է, որ Փանքիսի կիրճին մէջ ըմբոստներու բոյսը կ'երրոններ փակուած են անցեալ տարուան Օգոստոսին, երբ վրացական ուժեր յարձակած էին կիրճին վրայ:

Ան ըսած է, թէ գտնուած են արաբական ծագումով մարդիկ, որոնք «Քայիտա» ցանցէն ներսեան օժանդակութիւն կը ստանան:

«Անոնց մէկ քանին կ'ապրէր ունէին Ուսամա Պըն Լաւտէնի հետ եւ անոնց պատճառով է, որ կիրճին մէջ մարդուի քանի մը կ'երրոններ կ'առնուած են», աւելցուցած է ան:

Միւս կողմէ, ռուս գիտնականները կրակ բացած են Չեչենիոյ մէջ ձմեռորդատար օթոպիսի մը վրայ՝ սպաննելով անոր վարորդը եւ քանի մը քաղաքայիններ վիրաւորելով:

Դէպքը պատահած է ըմբոստ հանրապետութեան մայրաքաղաք Կրոպնի արեւելեան Կուտերմէս քաղաքին կապող ճամբուն վրայ:

(ԱՅՓ)

ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՄԱՍԿ, 15 (ԱՅՓ).- Սուրիոյ մէջ երեսփոխանական ընտրութիւններ պիտի կայանան Մարտ 2ին, հաղորդեց «ՄԱՆԱ» լրատու գործակալութիւնը: Յիշեալ աղբիւրը աւելցուց, որ նախագահ Պաշար Ասադ հրամանագիրով մը ձշղած է թուականը: Աստի նախագահ ընտրութեան (Յունիս 2000) ի վեր, Սուրիոյ մէջ երեսփոխանական առաջին ընտրութիւնները տեղի պիտի ունենան:

Աստի հրամանագիրը կը նշէր, թէ խորհրդարանին 250 երեսփոխաններուն 127ը պէտք է ներկայացնեն հողագործներն ու աշխատատեղերը, իսկ 123ը՝ պիտի ներկայացնեն մնացեալ մարդերն ու սպարեկները:

Ը. Յ. Դ. ՇԻՄԱԿՐՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Յրդ Էջն

Անդրադառնալով այսօր հայրութեան առջեւ ծառայած խնդիրներուն՝ ընկ. Յովհաննիսեան կարելու նկատեց Արցախի վերաբնակեցումը, Հաստատան ազգային եւ պետական անվտանգութեան համակարգին ամրագրումը: Երկրադաշտի թեմային հաստատումը նկատելով կարելու նախապայման Հայրենիք - Սիւրբ մերձեցման համար՝ Վահան Յովհաննիսեան վստահեցուց, որ չէ բացառուած հարցին դրական լուծումը:

ԱՅՀԻԼ AFHIL

ԲՈՇԿԱԿԱՆ ՏԵԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

RENT AND SALE

•Over Bed Table

•All Kinds Of Oxygen We Also Provide

•Laboratory service.

•Physiotherapist

•Nurses Aids

•P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՅԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆՏԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԸՏՆ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.